

Այունյաց երկիր

ՀԱՐԱԹ
12 ՀՈՒՆՎԱՐ 2014Թ. № 17 (325)

www.syuniacyerkir.am

**...Սին ՏԵՆԶԵՐԻ փոշին
մեր խոհերից ֆերենֆ
Ու ճանադարհ շնկնենք,
մե՞ծ ճանադարհ,
Գորից:**
ԵՐԵՎԱՆ

Հայի վերջին խելքը

Մեղրի, 1988-89թթ.

**Զգիտեմ ինչից սկսեմ: Եվ իմաստ ունի՜,
արդյոք, գրելը: Ինձնից առաջ քանի-քանիսն
են գրել, քանի-քանի «փայլուն» որոշում-
ներ են կայացվել, վերջին 10-12 տարում 8
փայլաբերակում միայն ինձ է հայտնի, հան-
րապետությունում կա՜ր արդյոք միևնույն-
ություն ու կազմակերպություն, որ Մեղրու
շրջանի շեֆությունը վերցրած չլինի...
Թերեւս, միայն մեկն է պակաս. շեֆու-
թյուն վերցրածների շեֆությունը վերցնող
գերատեսչություն:**

Անպտուղ որոշումների ալիքով տարուբեր-
վել, պարավել է Մեղրին, տապակվել սեփական
յուղում, որ ամենեւին էլ առատ չէր: Եվ անհար-
մար ես զգում գրված հազարավոր տողերին քո
տողն էլ ավելացնել, տնտեսական վերլուծու-
թյուններ, խելացի առաջարկություններ, որո-
շումներ ու կանխագծումներ, վերջին նախագ-
գուշացումներ բազմիցս են եղել, գո՛րծ է պետք,
գո՛րծ:

Աշտարակից Ուջան, ելեւեջուն
ճանապարհով, ցեխ ու անձրեւի, արեւ արթա-
յության, ծյուն ու բքի միջով փոքրամարմին մի
մարդ է առաջանում, մանդոլինը թելի տակ, գլու-
խը բարձր: Երգի դասատու է, 1918-19 թվերին,
Պետերբուրգից՝ Թիֆլիս, Թիֆլիսից Երևան
երթուղով է եկել: Իր կարեցածը հայ երեխային
հայ երգ ուսուցանելն է: Ո՞ր գնամ, ասել է: Ու-
ջան, ասել են: Երգվել ու գնացել է: Մանդոլի-
նը թելի տակ, նպատակը հստակ: Տարիներ են
անցել, կառավարություններ ու ղեկավարներ,
նոտաներ ու երգեր են հաջորդել մեկմեկու,
խմբերգերի միտումնալից զուլալ ծայրը խեղդ-
վել, անձը մոռացվել է: Դասատուները հրահան-
գիչ են դարձել, հրահանգիչները՝ քարտուղար,
ինքն՝ իր երգումին հավատարիմ, իր նպատակը
հստակ. հայ երեխային հայ երգ է պետք: Հի-
սուն տարի իր արահետով գնացել-եկել է: Ոչ ոք



Վազգեն Սարգսյան, Սպարապետ Հայոց

չի ասել՝ արահետով մատաղ. հետեւից կարմիր
խնձոր չեն ուղարկել: Հարագատները ձեռքներն
անհույս թափահարել, մայրաքաղաքներում
իրեն մոռացել են: Կողքից ծիծաղել ու մերթնդ-
մերթ խղճացել են: Ինքն իր երգումին հավատա-
րիմ, իր նպատակը հստակ...

Հեքիաթ չէ, ընկերոջս՝ Դուկաս Սիրունյանի
դասատուն է: Որտեղի՞ց ճանաչեք, իր անունով
փողոց չկա, արձան չենք կանգնեցրել: Պատ-
մությունն իրենց պարզ ու հասարակ, շարքային
է անվանում: Իրենց շարքային ցա՛վը տանեն:
ՀՆՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԷՑ 4

Մեղրի. վերացվել են հորդառապ անձրեւի հեպտանքները

Հարցազրույց համարին

**Հունիսի 16-ին Մեղրիում փեղացած
հորդառապ անձրեւի, դրա հեպտանքների
վերացման, ինչպես նաեւ մեր օրերում
արդիական դարձած արտագաղթի մասին
է զրույցը Մեղրու քաղաքապետ Արշավիր
Հովհաննիսյանի հետ:**

– Պարո՞ն քաղաքապետ, հունիսի 16-ին
Մեղրիում տեղացած հորդառապ անձրեւն
ինչպիսի՞ վնասներ հասցրեց քաղաքին, եւ
արդյո՞ք կարելի է ասել, որ հետեւանքները վե-
րացված են:

– Ասում են՝ բնության երեսույթները 19 տա-
րին մեկ կրկնվում են: Վերջին անգամ մեզ
հորդառապ անձրեւ տեղացել էր Լեռնավա-
Մեղ-
րի ճանապարհահատվածում, այս անգամ այն
բաժին ընկավ Մեղրի քաղաքին: Քաղաքի որոշ
փողոցներ 35-40 րոպե տեւած անձրեւի հե-


տեւանքով դարձան անանցանելի՝ լցվելով
քարաբեկորներով: Հիմնականում վնասվեցին
Փարամազի փողոցը, բազմաբնակարան շեն-
քերի առաջին հարկերը, որոնք լցվեցին ջրով, 6
մարդատար ավտոմեքենա մնաց տիղմի տակ:
Հեղեղից հետո մեր առաջին խնդիրը եղավ
հանձնաժողովի ստեղծումը՝ քաղաքին հասց-
ված վնասի չափը հաշվելու համար, ինչպես
եւ քաղաքի փողոցները դարձնելու անցանելի,
դուրս բերելու քարաբեկորների ու տիղմի տակ
մնացած ավտոմեքենաները: Շատ կարճ ժա-
մանակահատվածում փողոցները մաքրեցինք,
Սյունիքի մարզպետարանի համապատասխան
բաժնի աշխատակիցները տեղում ծանոթացան
իրավիճակին, որից հետո ցուցաբերվեց որո-
շակի ֆինանսական աջակցություն: Քաղաքի
բնակիչների եւ տեղական ու մարզային կա-
ռույցների համատեղ ջանքերի շնորհիվ հեղեղի
հետեւանքները մնացել են անցյալում. մնում է
ՀՆՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԷՑ 3



հսնդրում են մեքենան դանդաղ վարել:
Կարծես առաջին անգամ են Սիսիանում:
Հայացքս դիմապակուց աջ ու ձախ են
տեղափոխում՝ ծանոթ պատկեր է, ամեն
ինչ ավելի վատ է, քան քսան տարի առաջ
էր: Ավելացել է միայն մեծ պոետի արձա-
նը, որն իր կենտրոնացված, սեւեռուն
հայացքով հետեւում է քաղաքի հոգնած
ընթացքին: Փողոցների աջ ու ձախ մա-
սերում, մայթերին սեղմված հատուկներ
մարդատար ավտոմեքենաներ են կանգ-
նած: Մարդ չի երեւում: Տպավորություն է
ստեղծվում, թե քաղաքի բնակիչներն ինչ-
որ տեղ են գնացել:

Մեր մեքենան թեքվում է աջ եւ անց-
նելով կամուրջը՝ հայտնվում Սիսիանի
Աջափնյակում կամ քաղաքի երկրորդ
կենտրոնում (այս կամրջով անցնելու
համար նույնպես եւ վարորդից, եւ մե-
քենայից մեծ ջանք է պահանջվում): Այս-
տեղ արդեն մարդիկ են երեւում: Մի փոքր
խումբ կանգնած է բանջարեղենի խա-
նութի մոտ, նրանից հեռու՝ ծառերի տակ,
քարերին նստած երիտասարդները թուղ-
ք են խաղում: Մտնում ենք բնակելի շենքե-
րի բակը: Շարժվում ենք շատ դանդաղ,
ինչպես ասում են, զրոյի վրա: Մեղավո-
րը ճանապարհն է: Այն որպես այդպիսին՝
ՀՆՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԷՑ 8

Մարզի գյուղեր



ՍԱՐԳԻՍ ԱՌԱՔԵԼՅԱՆ. «Ներդրումային քաղաքականության նժարը պիտի թեքել դեպի սահմանային գյուղեր»

Սարգիս Առաքելյանը որևէ անձնավորության մասին հրապարակում պատրաստելիս, երբ գրույցի ձայնագրությունն արդեն թրթրում է հանձնված լինում, ուշադիր կարդում են՝ հետաքրքիր դրվագներ փնտրելով նրանում: Մեղրու տարածաշրջանի Վահրավար համայնքի ղեկավար Սարգիս Առաքելյանի մասին երկու ուշագրավ փաստ «պեղեցի» նրա հետ կայացած գրույցի տղազրույցում մեջ: Իմ գրուցակիցը երեւանի գյուղատնտեսական ինստիտուտի ագրոնոմիական բաժնի ավարտելուց հետո ընդամենը վեց ամիս է աշխատել գյուղատնտեսի մասնագիտությամբ եւ 1975-ի հունվարի 31-ից մինչեւ 1991-ի օգոստոսը (իր բնորոշմամբ՝ մինչեւ խորհրդային Միության փլուզվելը) ղեկավարել է հայրենի գյուղի կոլտնտեսությունը: Բազմաթիվ նվաճումներ են եղել այդ տարիներին, մինչեւ հիմա պահում է վերջին անգամ կոլտնտեսությանը պարգևատրված փոխանցված դրոշմ՝ խաղողի բարձր բերք ստանալու համար:

Սարգիս Առաքելյանը մեջ երկրորդ երեւելի փաստն այն է, որ 1996 թվականից (երբ ձեւավորվեցին տեղական ինքնակառավարման մարմինները) ընտրվեց Վահրավարի գյուղապետ եւ մինչեւ հիմա իր ծննդավայրի ղեկավարմանն է լծվել: Եվ լրագրողի անենատարածված հարցազրույցներից մեկին, թե նորից սկսեիր կյանքդ, ինչպե՞ս կկառուցեիր այն, ո՞ր բացթողունդ կշտկեիր, պատասխանում է, որ իր ապագան մոտակայքում չէր փնտրի, նորից ու կրկին իր հայրենի գյուղում կանցկացներ կյանքը:

Իսկ մասնագիտությունը ընտրելու վերաբերյալ անկեղծ պատմություն է ամուսն: Նախ ներկայացրեց իր արմատները: Հայրը՝ երկրորդ աշխարհամարտի մասնակից Աբգար Առաքելյանն Ափկեզ գյուղից է (ցավով, այդ բնակավայրից միայն հուշ է մնացել), մայրը՝ Վահրավարից: Երեք ջեռուց երկուսը կոլտնտեսության մասնագետ են եղել, ավագ մորեղբայրը՝ Հարություն Գավթյանը, երբ սկսվեց կոլտնտեսային շարժումը, ստանձնեց գյուղի կոլտնտեսության ղեկավարումը, մյուս ջեռին գյուղի կոլտնտեսությունը ղեկավարել է 1940-ականներին, հայրը եւս ինը տարի կոլտնտեսության մասնագետ է եղել: Այնպես որ Առաքելյանների գերդաստանում գյուղի տնտեսությունը ղեկավարելու ավանդույթ էր ձեւավորվել: Խոստովանում է, որ իր համար հոգեբանորեն դժվար է եղել երիտասարդ տարիքում ղեկավար պաշտոն զբաղեցնելը: Այդ մասին առավել քան անկեղծ է. «Ձգտել եմ դառնալ շրջկոմի քարտուղար՝ նայելով այն մարդկանց, որ գյուղատնտեսական ինստիտուտ են ավարտել եւ շրջկոմի քարտուղար դարձել, Յուրի Շամիրի Առաքելյան եւ ուրիշներ, մտածեցի, որ ինքս էլ պիտի այդ բուհն ավարտեմ, եւ այդպես էլ եղավ: Բայց հետո տեսա, որ գյուղն ավելի է ձգում՝ մեր հողը

ու ջուրը, անցյալի հիշատակները, գյուղական անկրկնելի բարբերը: Երբ առաջին անգամ կոլտնտեսության մասնագետ էին նշանակում, ջահել տղա էի, 22 տարեկան դեռ չկային: Հի համաձայնում, գոռով եկան, տնից քաշեցին-տարան: Հայրս էլ սիրտ տվեց, թե՛ կօզնեմ, կաշխատես: Կարելոն այն է, որ չեմ զղջացել եւ վատ չեմ աշխատել, բուհն ավարտելուց հետո մասնագետ եմ եղել: Այն ժամանակ Կենտրոնի քարտուղար կար, Ղալուսյան ազգանունով: Նրա օրոք եմ նշանակվել: Ինձ անվանում էր կոմսոմոլ մասնագետ: Երբ Մեղրու շրջկոմի առաջին քարտուղարը՝ Յուրի Շամիրին, լինում էր կենտրոնական աշխատասենյակում, հետաքրքրվում էր ինձանով. «Կոմսոմոլ մասնագետը ո՞նց է, արդարացում է իրեն»:»:

Սկսեմք ծննդավայրից: Վահրավարը մարզկենտրոնից 78, Մեղրի քաղաքից 11.5 կիլոմետր է հեռու: Գյուղի տարածքը սահմանակից է Լեհվազի, Գուղեմնիսի համայնքներին: Հայ-աղբթեջանական հակամարտության օրերին, գյուղապետի վկայությամբ, առաջին արկը Վահրավարում է պայթել: Գյուղն անմիջապես Նախիջեանի սահմանին կպած է, ուստի հարմար էլ այստեղ ամասնապահությամբ զբաղվել: Այս առումով միանգամայն արդարացիորեն համայնքապետը կարծում է, որ ներդրումային քաղաքականության մտարը մայրաքաղաքից ու Հայաստանի կենտրոնական շրջաններից

պիտի թեքել դեպի սահմանային գյուղեր: Այլապես հետո ուշ է լինելու: Ոչ միայն Վահրավարում ձեռնտու չէ անասուն պահելը, այլեւ երկու անգամ անասնազոհության դեպք է գրանցվել, մի անգամ համայնքը գրկվել է 14, իսկ մասնագետ տարի՝ 9 խոշոր եղջերավոր անասունից:

Համայնքների խոշորացման հայեցակարգը, որի կիրառումը, ասում են, պիտի սկսեն Վայոց ձորից եւ Սյունիքից, կործանարար կլինի ոչ միայն Վահրավար, այլեւ հարեւան սահմանամերձ, սահմանակից, սահմանապահ (այս մակդիրները կարելի է շարունակել, հաշվի առնելով դրանց ռազմավարական նշանակությունը) Կուրիս եւ Գուղեմնիս գյուղերի համար: Այս հարցում երկու կարծիք լինել չի կարող:

Այնուհետեւ տեղը տեղին ներկայացնում է գյուղի հողատարածությունները եւ անասնազոհաբանակի ցուցանիշները խորհրդային տարիներին եւ իր ղեկավարության օրոք. փաստում է, որ նախկին հողատարածությունների 40 տոկոսը չի մշակվում: Նախկինում գյուղի մախրի մեջ 310 խոշոր եղջերավոր անասուն կար, հիմա համայնքում 40 խոշոր է մնացել, մանր եղջերավորների հոտը 350 գլուխ էր, հիմա անհատ մարդկանց մոտ եղածի թիվը չի անցնում 40-ը... Վահրավարը եզակի համայնքներից է, որ ամբողջությամբ զբաղվում է խաղողագործությամբ: Մարզի գյուղերը ներկայացնելիս հաճախ նշում ենք՝ համայնքում հիմնականում զբաղվում են անասնապահությամբ կամ դաշտավարությամբ: Այլ է բանը սահմանամերձ այս համայնքում: Մոտ 800 խաղող են մշակում վահրավարցիները: Ի դեպ, մարտի վերջին գյուղատնտեսությանը պատուհասած ցրտահարությունից առավելապես տուժեցին կորիզավոր պտուղների ծառերը, նաեւ ընկուզենիներ: «40սմ ծյուն եկավ հոնի, ծիրանի, դեղծի ծաղիկների վրա, բարեբախտաբար, խաղողը չի տուժել, թե՛ վնասատուներն էլ իրենց սեւ գործը չանեն, ռեկորդային բերք կստանանք», - ասում է փորձառու գյուղատնտեսը: Իսկ հարցին, թե որքա՞ն է ռեկորդայինը, պատասխանում է, որ խորհրդային տարիներին 2008 խաղողի բերք է ստացել կոլտնտեսությունը: Բայց այդ ռեկորդայինը վաղուց անցյալում է մնացել եւ, բնականաբար, անհասանելի է: Նաեւ անմիջապես հավելում է. մախրից համեմատ 20 տոկոսով կրճատվել են խաղողի այգետարածությունները: Եթե 10հա էին մշակում, հիմա՝ ութ հեկտար:

Իսկ պետությունը քայլեր ձեռնարկում է վահրավարցիներին բնական տարեբեր հասցված վնասի դիմաց փոխհատուցում տրամադրելու համար: Պետությունը 214 հազար դրամ է հատկացրել, ավելի ստույգ՝ հողի հարկը փակել են, հողի հարկի գումարը պահանջել են ըստ շնչերի եւ փոխհատուցել: «Ցանկալի կլինի, որ հակակարկտային թնդանոթներ տեղադրեին, զոնե երկուսը-երեքը լինել մեր կողմերում, որ երկնային այդ պատուհասից ազատվեցինք, մի տարի, որ կարկուտ չի գալիս, ասում ենք, այս անգամ էժան պրծանք», - անբարեբախտ եղանակի թեման այսպես է ամփոփում մեր գրուցակիցը:

Ի՞նչն է ավելի մտահոգում երկարամյա գյուղատնտեսին եւ համայնքի ղեկավարին: Պարզվում է՝ առավելապես այն, որ այգիների մի մասը չի մշակվում, որ խաղողի այգիների ոռոգման ջուրը մեծ կորուստներով է հասնում: Ջրի պակասություն չկա, Վահրավար գետի ջուրը լիովին բավականացնում է ոռոգման համար, դրանից բաժին է հասնում նաեւ հարեւան Գուղեմնիսին եւ Կուրիսին, դրանից հետո ջրի ավելցուկը հասնում է նաեւ Կարճեւան եւ Ագարակ: Բայց ոռոգման ջրի առումները հիմ, «պապական» են, տարեկան 9կմ

առու են մաքրում, բայց ջուրը շարունակ կորչում է: Գյուղի սոցիալ-տնտեսական հիմնասխեմները ներկայացնելիս, համայնքի սոցիալ-տնտեսական ծրագիր կազմելիս, առաջինը նշում է առուների նորացումը, ավելի ստույգ դրանցում խողովակներ գցելը, որ ջուրը դրանցով հոսի, եւ կորուստներ չլինեն: Բայց սայլը տեղից չի շարժվում...:

Հայտնի հեքիաթի համադրյալ, գյուղապետից ցանկացանք իմանալ նրա երեք ցանկությունը: Առաջին ցանկությունն այն է, որ գյուղում մի փոքրիկ արտադրամաս բացվեր, երկրորդ՝ բնակչության թիվն այնքան ավելանար, որ մանկապարտեզն ու դպրոցը վերստին բացեին իրենց դռները եւ, վերջապես, գյուղապետարանին այնքան գունձար հատկացնեին, որ կարողանար զոնե ընթացիկ մանր-մուկը հարցերը լուծել: Իսկ այժմ համայնքի տեղական բյուջեն 4.8 մլն դրամ է (որից 3.5 մլն պետական լրավճարն է), որը հազիվ բավականացնում է գյուղապետարանի ապարատը պահպանելուն: Փորձառու գյուղապետի կարծիքով՝ ֆինանսական համահարթեցման մասին գործող օրենքով համայնքների ֆինանսավորումը մերժելի շատ սկզբունքներ է պարունակում, ինչից պետք է հրաժարվել: Ինչ վերաբերում է համայնքի կրթօջախին, ապա դպրոցի դռները գոցվել են 2004թ., երբ ընդամենը չորս աշակերտ է ունեցել, մինչդեռ եղել է ուսումնական տարի, երբ դպրոցի ճամփան բռնել է 86 աշակերտ:

Համայնքում դպրոց չլինելը միշտ անհարմարություններ, եթե չասենք՝ խոչընդոտներ է առաջացրել վահրավարցիների համար: Այժմ էլ գյուղում դպրոցահասակ երեխաներ կան: Եվ այդ հանգամանքն ընտանիքների երկփեղկման պատճառ է դարձել: Երեխաներին ուսման տալու համար ընտանիքի մայրը Մեղրիում է լինում, որ հոգա դպրոցական երեխաների հոգսերը: Իսկ հայրը Վահրավարում այդ է մշակում, անասուն պահում, այդպիսով հոգում ընտանիքի հանապազօրյա հոգսերը: Գյուղապետն էլ տարիներ ի վեր իր անհատական օգտագործման մեքենայով է իր երեխաներին եւ գյուղաբնակ դպրոցականներին դասի տարել Մեղրի, ժամանակաշրջանն էլ նշում է՝ 14 տարի: Եվ հիմա իրեն լիովին վարձատրված է զգում, որ երեք զավակն էլ բուհավարտ են, մասնագիտության տեր: Ինչեւէ, իրողությունն այն է, որ այսօր համայնքի մշակութային միակ օջախը մնում է ակումբը...:

Սահմանամերձ գյուղերը (ինչը շատ դատապարտելի կարելի է համարել) լինել-չլինելու խնդրի առջեւ են կանգնել: Բաժանումից առաջ, փոքրիշատե արդեն տեղյակ լինելով համայնքի հիմնասխեմների մասին, գյուղապետից ցանկանում են իմանալ, թե, այնուամենայնիվ, ո՞րն է Վահրավարի համար առաջնահերթը: Պետությունն ի՞նչ պիտի անի, որ հոգա մի ծանր բեռ ընկնի գյուղի, կամ որ միեւնոյն է, գյուղապետի ուսերից: Պարզվում է, որ արտաքին աշխարհին կապող փոխադրամիջոցի պակասն է մտահոգում: «Նախ մի ավտոբուս պիտի հատկացնեն, թեկուզ վնասով աշխատի», - պատասխանում է: Փոխադրամիջոց, որից կօզուվեն ոչ միայն Վահրավարը, այլեւ Կուրիս ու Գուղեմնիս, ինչպես նաեւ Լեհվազ համայնքները: Մի քանի տարի է, ինչ առաջին երեքը հիմնամուրոգված, բարեկարգ ճանապարհով կապված են Կապան-Մեղրի ավտոբուսային խնդիրը մնում է օրից կախ:

Այնուամենայնիվ, 60-ամյա գյուղապետը չի կորցնում լավատեսությունը եւ այն համոզումն ունի, որ լեռնային ու սահմանային համայնքների համոզեալ վերաբերմունքը պիտի հստակեցվի:

Ամուլսարը հոշոտելու փենդը թեժանում է

Կողոպտվում է հայ ժողովրդի ունեցվածքը, ավերվում է Հայաստանի բնությունը



ՀԱԿՈՒ ՍԱՆԱՍՐՅԱՆ

Հայաստանի կուսակցության միության նախագահ

Կունենա: Դրա վառ ապացույցը, այժմ Հայաստանում մետաղական հանքավայրերի ընդերքօգտագործման ուսումնասիրության եւ շահագործման իրավունք ստացած ընկերությունների քվարկումն անգամ մեծ ժամանակ կապահանջի: Այն դեպքում, երբ Հայաստանում իրական հանքավայրերը միայն մի քանիսն են: Կողոպտելու մոլուցքն ընկերություններին կարծես գրկել է գիտակցելու, որ Հայաստանում հանքարդյունաբերությունը հիմնականում հանված է հարկային դաշտից եւ դրվել է ոճրագործական հիմքերի վրա: Նրանք չեն ուզում նկատել, որ վաղ թե ուշ այս ոճրագործության մասնակից-

Հարգելի Թոմաս Լուբեկ

Պատասխանելով Հայաստանի կանաչների միության նամակին, Դուք նշում եք, որ մասնավոր ընկերություններին ֆինանսավորելով, ցանկանում եք Հայաստանում զարգացնել կայուն հանքարդյունաբերություն, որը կօգնի աշխատատեղերի ստեղծմանն ու Հայաստանի տնտեսության աճին, իսկ Ամուլսարի առումով գրում եք, թե այդ հանքավայրի շահագործումը չի սպառնում ջրային պաշարներին: Ամենեւին այդպես չէ: Նախ, կայուն հանքարդյունաբերություն հասկացությունն ամբողջով է, քանի որ հանքանյութի պաշարը սպառվելուց հետո այն այլևս գոյություն չի ունենա եւ ապա, հանքարդյունաբերության ոլորտում ստեղծված աշխատատեղերը ժամանակավոր են, իսկ դրանց հետեւանքով ոչնչանում են հազարամյակներ շարունակաբար գոյություն ունեցող մշտակայուն աշխատատեղերը, օրինակ, գյուղատնտեսության ոլորտում: Նորություն չէ, որ IFC-ը ֆինանսավորում է հանքարդյունաբերությանը զբաղվող մասնավոր ընկերություններին, այն էլ հիմնականում օֆշորային գոտում գնացված: Այդպես են վարվում նաեւ մեզ հայտնի մյուս բանկերը: Բանկերի տրամաբանությունը հատկապես հայաբնակների համար արդեն հասկանալի է՝ պետությանը զրկել իր սեփական տնտեսությունը վարելու եւ մասնավորապես՝ հանքավայրերը շահագործելու հնարավորությունից, իսկ մասնավորի, գլխավորապես օտարերկրյա ընկերությունների համար պայմաններ ստեղծել, որպեսզի տիրեն ժողովրդի ունեցվածքին: Այս ամենը կատարվում է բառիս բուն իմաստով կողոպտելու, գողության եւ թալանի ճանապարհով: Ժողովրդի ունեցվածքը գլխավորապես օտարերկրացիներին բաժին դարձնելուն հիմք են հանդիսանում Հայաստան ներկրված եւ Համաշխարհային բանկի ու միջազգային այլ կազմակերպությունների դրամաշնորհներով կյանքի կոչված օրենքները: Պարզվում է, որ դրսից թելադրված օրենքներով կարգավորվող ժողովրդի ունեցվածքի գողությունը եւ դրան զուգորդված՝ բնական համակարգը ապրելու համար ոչ պիտանի դարձնելը, այսինքն հայ ժողովրդի արտագաղթի-ոչնչացման համար հիմքեր ստեղծելը շատերի ճաշակով է: Շուրջ 8 տարի է, ինչ Հայաստանի ընդերքօգտագործման ոլորտում իրաբաններն է: Ընկերությունների միջեւ մրցակցություն է գնում, թե ով ավելի շատ գողանալու հնարավորություն



Thomas Lubeck, IFC Regional Manager for the South Caucasus

ներն օրենքի առջեւ պատասխան են տալու: Իսկ եթե ժողովուրդը տեղեկանա իրավիճակի մասին ու ոտքի կանգնի, ապա կարելի է սպասել, որ մեղավորներն ավելի ծանր կհատուցեն: Հանքաշահագործողներն ազատվելով հիմնական հարկերից, մետաղների ցածր պարունակությամբ հանքերեւակումները շահագործում են որպես հանքավայրեր, ինչ չը հրաբխային երկրի՝ Հայաստանի համար կատաստրոֆիկ հետեւանքներ է ունենալու: Ինչ վերաբերում է Ամուլսարին, ապա այն Հայաստանը կողոպտելու եւ ապրելու համար ոչ պիտանի դարձնելու գործողության, գուցե եւ՝ ծրագրի միայն մի մասն է: Ըստ մամուլի հրապարակումների՝ Ամուլսարի հանքավայր կոչված շահագործմանը ձգտող «Լիդիան Ինթերնեյշնլ» հիմնական բաժնետերերը Համաշխարհային բանկի խմբի անդամ բանկերն են, այդ թվում նաեւ Միջազգային ֆինանսական կորպորացիան, այսինքն՝ Չեր բանկը: Այս ծրագիրը ֆինանսավորելու բուն ցանկություն են դրսևորել նաեւ այլ բանկեր (Unicredit, BNP, Rand Merchant Bank, ING, Raiffeissen, Societe General, Natixis, Nedbank, Standard Bank, Citibank): Ըստ հարցումն ձգտող կողմը հայտարարում է, որ Ամուլսարի ծրագրից կշահեն թե՛ ընկերությունը, թե՛ շրջակա համայնքները, թե՛ Հայաստանը: Հայտարարածը միայն մասնակիորեն է ճիշտ: Վերլուծությունը ցույց է տալիս, որ այդ ծրագրից կշահի բացառապես ընկերությունը, իսկ համայնքն ու Հայաստանը կկրեն անասելի եւ անդառնալի կորուստներ: Բերենք որոշ փաստեր: Ամուլսարի նախագծում գրված է, որ Տիգրանես տեղամասի հանքաքարի պաշարները կազմում են 56,43 մլն տոննա՝ 52,66 տոննա ոսկու եւ 210,5 տոննա արծաթի պարունակությամբ: Մոտավոր հաշվարկներով այս հանքանյութից լավագույն պայմաններում կարելի է կորզել մոտ 45 տոննա ոսկի եւ 180 տոննա արծաթ, մոտավորապես 2,5

մլրդ դոլար արժողությամբ, եթե ուղեկող մյուս հազվագյուտ մետաղների արժեքն ընդունենք 500 մլն դոլար, ապա ընկերության ամբողջ եկամուտը կկազմի մոտ 3 մլրդ դոլար, եթե այդքան կազմի: Այժմ տեսնենք, թե «Լիդիան Ինթերնեյշնլ» նշված քանակի հանքաքար հանելու եւ վերամշակելու համար պետությանն ինչ հարկեր պետք է մուծեր (որոնցից ազատվում է ժողովրդի շահերին հակասող, դրսից թելադրված օրենքների օգնությամբ): 1. Ցիանիդային լուծույթով տարրավազված մոտ 56 մլն տոննա մանրացրած հանքաքարը որպես առաջին դասի թափոն, շրջակա միջավայրում տեղադրելու համար ընկերությունը պետությանը պետք է որ մուծեր 6,72 մլրդ դոլար (56000000X120), եթե չլինեին այդ բնագավառը կարգավորող անհիմն ու չիճժու օրենքները: 2. Հանքահանման ընթացքում առաջանալու են 222 մլն տոննա «դատարկ» ապարներ: Նույնպես ծանր մետաղներ պարունակող այս թափոնը եթե ընդունենք անգամ երրորդ դասի թափոն, ապա նշված չիճժու օրենքների բացակայության դեպքում, ընկերության կողմից պետությանը մուծելիք գումարը կկազմեր 2,66 մլրդ դոլար (222000000X12): 3. Հանքավայրի մակերեսը 80, տարրավազման հարթակինը՝ 147, «դատարկ» ապարների զբաղեցնելիք տարածքը՝ 161 հեկտար է: Այս 388 հեկտար տարածքը հազարամյակներ շարունակ կորցնելու է իր բնատուր ֆունկցիան եւ դառնալու է շրջակա միջավայրի աղտոտման-թունավորման աղբյուր: Պետք է հաշվել, թե թունավոր թափոնների տակ հավերժորեն մնացող, մի մասն էլ հանքախոռոչ դարձած 388 հեկտար տարածքի համար պետությանն ինչ գումար պետք է վճարվի... որից ընկերությունն ազատված է անհիմն օրենքներով: 4. Ամուլսարի ծրագիրն իրականացնելու դեպքում վնասվելու են բուսականությունը, վայրի եւ ընտանի կենդանիները, աղտոտվելու են արտոսվայրերը, վարելահողերը... Որոտան գետը, Սպանդարյան ջրամբարը, հետեւաբար եւ Սեւանա լիճը... Ինչպես տեսնում ենք, հանքավայրի շահագործման դեպքում, միայն երկու թափոնների համար վճարելիք գումարը կազմում է 9,38 մլրդ դոլար, այն դեպքում, երբ ընկերության եկամուտը կարող է կազմել մոտ 3 մլրդ դոլար: Այսինքն, Ամուլսարի հանքավայրը հարկային դաշտ բերվելուց հետո այն անգամ ծախսածածկող չի լինի: Չազդելի գործելակերպ: Ֆինանսական եւ քաղաքական լծակներով ծնկի են բերում երկրներին, ոչնչացնում են կյանք սպառող աշխատատեղերը եւ կողոպտում, օրինակ, բնական պաշարները, որի ընթացքում թունավորում եւ ավերում են կյանքի հենարան հանդիսացող բնական համակարգերը: Սա աշխարհի բնակչության թվի նվազեցման հուսալի ու արյունալի եղանակներից մեկն է: Չեզ անշուշտ հայտնի է, որ աշխարհում միայն սովից օրական ավելի քան 30 հազար մարդ է մահանում եւ այս անմեղ գոհերի մահվան գերանդին հիմնականում վարկային կազմակերպությունների ձեռքում է դրված:

Վարկային քաղաքականության փոփոխման եւ ուրիշ երկրների ներքին կյանքին չմիջամտելու ակնկալիքով
30 հունիսի 2014թ., aravot.am

Մեղրի. վերացվել են հորդառապ անձրեւի հեպտեանքները

Հարցազրույց համարին ՍԿԻՔԸ ԷՏ 1

միայն բնակիչների (80 դիմում ունենք) փոխհատուցումը, որը, կարծում եմ, ժամանակի խնդիր է:
- Ոչ վաղ անցյալում Մեղրիում գործում էր Լիճքվազ-Թեյի ոսկու հանքավայրի վրա հիմնված ձեռնարկություն, որը բավականին մեծ ծրագրեր էր իրականացնում տարածաշրջանում, որը նաեւ մոտ 400 աշխատատեղ էր ապահովում: Հետո կոիվներ եղան հանքավայրի արտոնագրի համար: Ի վերջո այդ ձեռնարկությունը կանգ առավ: Հույս կա, որ պարապուրդի մատնված ձեռնարկությունը կվերագործարկվի, թե՛ ոչ:
- Ցավալի է, բայց «Ազա-մար» ընկերության, որին տրվել է Լիճքվազ-Թեյի ոսկու հանքավայրի շահագործման արտոնագիրը, աշխատանքների մասին միայն խոստումներ ենք լսել: Հանքավայրում պարապուրդը շարունակվում է, եւ չեն կարող ասել, թե որքան կտեւի: Բայց չէի ասի, որ այդ ձեռնարկության պարապուրդը սրել է զբաղվածության խնդիրը մեզանում:
- Արդյո՞ք կարող եք Չեր խոս-

քից ենթադրել, որ Մեղրի քաղաքին չի սպառնում մեր երկրի համար արդիական եւ լայնամասշտաբ արտագաղթը:
- Որպես քաղաքապետ՝ կարող եմ նշել, որ Մեղրի քաղաքին արտագաղթ չի սպառնում, դեռ ավելին՝ քաղաքի բնակիչների թիվն իմ պաշտոնավարման մեկուկես տարում ավելացել է 84-ով: Թերեւս արտագաղթ չլինելու ամենակարեւոր պատճառն այն է, որ մեղրեցին այսօր մեծ մասամբ ապահովված է աշխատանքով: Հիմնական աշխատատեղերն ապահովում են Մեղրիում տեղակայված ռուսական սահմանապահ զորամասը, Ազարակի պղնձամոլիբդենային կոմբինատը: Այսօր այդեղործական տնտեսության զարգացման համար նախադրյալներ կան քաղաքում, բացի դրանից, եթե մի ժամանակ երիտասարդները խուսափում էին հողագործությունից, հիմա արդեն շատերը լրջորեն զբաղվում են դրանով: Ես այս կարծիքին եմ, որ հողը մշակին երբեք սոված չի թողնի, ինչքան էլ բնությունը տհաճ անակնկալներ մատուցի:
Հարցազրույցը՝ ԱՐՄԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ

ՀՀ բնապահպանության նախարարությունն ընդունում է, որ փոքր ՀԷԿ-երը խնդիրներ են ստեղծում

ՀՀ բնապահպանության նախարարությունն ընդունում է, որ փոքր հեկերը խնդիրներ են ստեղծում: Այս մասին նախարարությունը նամակով պատասխանել է Համահայկական բնապահպանական ճակատին: Վերջինիս տարածած հաղորդագրության մեջ մասնավորապես ասված է. «Ներկա կառավարությունից առաջմ պատասխան ենք ստացել միայն բնապահպանության նախարարությունից, որտեղ մասնավորապես նշված է, որ ՓՀԷԿ-երի՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության փուլում կան որոշակի խնդիրներ՝ կապված ենթակայացված նախագծերում անհրաժեշտ գիտական եւ օբյեկտիվ հիմնավորումների բացակայության հետ, իսկ շինարարական աշխատանքների ընթացքում հաճախ վնաս է հասցվում բնությանը եւ շրջակա միջավայրին, չեն տեղադրվում ձկների համար նախատեսված ձկնանցարաններ: Չեն տեղադրվում նաեւ ջրի հոսքը կարգավորող փակվածներ, ինչի պատճառով չի ապահովվում էկոլոգիական թողքը: ...ՀՀ բնապահպանության նախարարությունը որոշ հարցերում համակարծիք է մեզ հետ եւ փոքր ՀԷԿ-երի առաջ բերած խնդիրները նվազագույնի հասցնելու համար նախընտրելի է համարում:
- հրաժարվել բնական ջրահոսքերի (գետերի) վրա նոր փոքր ՀԷԿ-եր կառուցելու քաղաքակա-

նությունից եւ կառուցել դրանք միայն ոռոգման համակարգերի վրա,
- ստեղծված իրավիճակը թելադրում է էկոլոգիական թողքի հաշվարկման նոր մեթոդիկայի մշակման անհրաժեշտություն,
- ձեւավորել մեխանիզմներ բնապահպանական թողքի քանակը կարգավորող ավտոմատ համակարգերի ներդրման համար,
- անհրաժեշտություն է առաջացել վերանայել փոքր ՀԷԿ-երի լիցենզիաների տրամադրման ընթացակարգը, ըստ որի՝ կառուցման լիցենզիա պետք է տրամադրվի ՀԷԿ-ի նախագծային փաթեթի՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության դրական եզրակացություն ստանալուց հետո»:
Համահայկական բնապահպանական ճակատը կոչ է անում ՀՀ կառավարությանը՝ խոսքերից անցնել գործնական քայլերի եւ բոլոր շահագրգիռ պետական, մասնավոր ու հանրային շերտերի հետ քննարկման արդյունքում հստակ միջոցառումներ ձեռնարկել փոքր ՀԷԿ-երի ոլորտում իրականացվող քաղաքականության վերանայման ուղղությամբ, քանի որ այլընտրանքային ենթագետիկայի այս տեսակի նման զարգացումն արդեն առաջ է բերել լուրջ խնդիրներ:
ecolur.org
7 հուլիսի 2014թ.

Վոլեյբոլ

Հունիսի 25-30-ը Երեւան քաղաքում անցկացվեց ՀՀ 2014 թվականի արդիկների 1999-2000թթ. ծնվածների վոլեյբոլի առաջնության եզրափակիչը: Մրցումներին իրավունք էր ստացել մասնակցել Սիսիանի թիմը: Սյունիքի հավաքա-

կանի կազմում ընդգրկված էր նաեւ Կապանի մանկապատանեկան մարզադպրոցի վոլեյբոլիստուհի Աշխեն Դուկասյանը (մարզիչ՝ Սուրիկ Մանուչարյան): Մեր թիմը (մարզիչ՝ Արմեն Գալստյան), հաղթելով բոլոր մրցակիցներին, գրավեց առաջին տեղը, նվաճեց ֆեդերացիայի գավաթը, իսկ թիմի անդամներն արժանացան ոսկե մեդալի եւ պատվոգրի:
ՍԵՓ. ԼՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Հայի վերջին խելքը

Մեղրի, 1988-89թթ.

ՍԿԻՉԲԸ ԷՏ 1

Շարքայինի կարիք ունենք: Մի լավ հովիվը, հայ երգի մի երգվյալ դասատուն Մեղրու գյուղերում տասը հողված արժեն, Վազգեն Սարգսյան: Ու թե, այնուամենայնիվ, գրելու ես, ուրիշներին թող տնտեսական վերլուծությունները, գրական հնարքները եւ ազդարարի, ինչպես, ասենք, Թատերական իրապարակի բարձրախոսից կազդարարեիր.

Հայրենակիցներ, Մեղրու շրջանի Աղարտ գյուղի նորաստեղծ հայկական-ռուսական դպրոցին անհրաժեշտ են հայոց լեզվի եւ գրականության ուսուցիչներ:

Մեղրու շրջանի բոլոր գյուղերին օդի պես անհրաժեշտ են հայ խաշնարածներ:

Մեղրու շրջանի լքված ու կիսալքված շեներին անհրաժեշտ են տեր ու տիրականներ:

Մեղրու ժողովրդին ինչքեր միայն անհրաժեշտ չեն, բայց մեղրեցին ուզվոր չէ, մի բան է խնդրում իր ժողովրդից ու իր կառավարությունից.

Արտագավորություն:

Կատարվել է ամենացավալին. նախանցյալ տարվա Դարաբաղի նման այստեղ էլ Հայաստան-Մեղրի տարբերակում են դնում. «Հայաստանից թղթակիցներ են եկել»: Ահա, թե ուր ենք հասել: Այն, ինչ Սասանյան Իրանին ու արաբներին, սելջուկ թուրքերին ու մոնղոլ-թաթարներին, թուրքերին ու կրկին թուրքերին չհաջողվեց անել զենքով, ինքներս հաջողացրինք կիսաքուն ինքնախաբերությամբ ու անտարբերությամբ: «Հայաստանից թղթակիցներ են եկել»: Շուռ չգաս գերեզմանում, Արագածին ծնված ընկեր, բայց թո հրակեզ հոգին թող սավառնի մեր լեռներում ու բնդեցնի երկինք-գետինը. «Ձզոն եղեք, հայ ու հայրենիք ենք կորցնում»:

«...Ձանգեզուրը ցարական իշխանության օրոք կազմում էր Ելիզավետպոլի (Գանձակի) Սահանգի մեկ զավառը՝ Դարաբաղի եւ Դարակաստանի միջեւ: Գավառը բռնում էր 6743 քառակուսի վերստ տարածություն եւ 1916թ. ուներ 226000 բնակիչ: Ձանգեզուրի վարչական սահմաններն էլ արհեստականորեն զծված էին այնպես, որ ոչ մի ժողովուրդ նրա մեջ մեծամասնություն չէր կազմում:

Ռուսական հեղափոխության լուրը Ձանգեզուրում էլ առաջ բերեց ընդհանուր ոգեւորություն: Հետզհետե կազմվեցին հեղափոխական կոմիտեներ՝ փոխարինելու համար հին իշխանությանը: Մարտի սկզբներին Դարաբաղն ու Ձանգեզուրը միացվեցին, եւ կազմվեց Գանձակից անկախ մի առանձին շրջան՝ շրջանային գործադիր կոմիտեի գլխավորությամբ: Սակայն շրջանային այս նոր կազմակերպությունը հաջողություն չունեցավ, Դարաբաղն ու Ձանգեզուրն ապրում էին անջատ, իրարից կտրված, եւ կացությունը գնալով վատանում էր: Դրան նպաստում էին բախումները թուրք թուրքերի եւ տեղական հայ ու ռուս գյուղացիների միջեւ: Տեղական թուրքերն էլ բռնում էին թուրքերի կողմը, որից առաջ էին գալիս ընդհարումներ հայերի ու տեղական թուրքերի միջեւ: Գործերն ավելի խճճվեցին, երբ թուրքերը Ձանգեզուրի թուրքական մասը հայտարարեցին Գորիսից անկախ եւ Դոնդարլու գյուղում կազմեցին առանձին կառավարություն՝ մահմեդական կոմիտե անունով: Այսպիսին էր դրությունը 1918 թվականի հունվարի վերջին:

Հուլիսին Ձանգեզուր մտավ Անդրանիկը եւ անցավ ինքնապաշտպանության գլուխ: Նոյեմբերին թուրքերը նորից դիմեցին գործողությունների՝ Ձանգեզուրի դեմ, որ տեւեց մինչեւ դեկտեմբեր: Անդրանիկը, որ ստացել էր դարաբաղցիների օգնության կոչը, ջարդեց թշնամուն եւ շարժվեց դեպի Շուշի: Բայց կեսճանապարհին «դաշնակից» անգլիացիների կողմից կանգնեցվեց եւ վերադարձվեց Ձանգեզուր: Անգլիացիների երեւալը Ձանգեզուրում առաջ էր բերել անխառն ուրախություն, որը, սակայն, շուտով պղտորվեց անգլիացիների բռնած երկ-

րիմի դիրքով: «Մեր մեծ դաշնակիցներն» էլ աշխատում էին Ձանգեզուրը դնել Ադրբեջանի իշխանության տակ՝ ջուր լցնելով Թուրքիայի ջրաղացին: Այսպես. 1919թ. մայիսի 2-ին Գորիս եկավ անգլիական միսիայի պետ՝ մայոր Մաք Մեգենը, եւ, հրավիրելով Ձանգեզուր-Դարաբաղի շրջանային խորհրդի անդամներին, արեց հետեւյալ հայտարարություն-պահանջը.

1. Ճանաչել Ադրբեջանի իշխանությունը:
2. Համաձայնություն տալ թուրքերին բարձրանալու Ձանգեզուրի լեռները:

Շրջանային խորհուրդը մայիսի 3-ին տվեց հետեւյալ գրավոր պատասխանը. «Ձանգեզուրի առաջին գյուղացիական համագումարի որոշման համաձայն Հայաստանի Հանրապետության երկրամաս Ձանգեզուրի դեմ կատարված յուրաքանչյուր հարձակողական գործունեություն կհանդիպի ամենահամառ ու կատաղի դիմադրության Ձանգեզուրի հայ ժողովրդի կողմից:

Հայաստանի Հանրապետության երկրամասում չապրող թուրքերին ոչ մի դեպքում եւ ոչ մի պայմանով չի թույլատրվում բարձրանալ Ձանգեզուրի սարերը:

Ուղիղ երկու տարի է, ինչ Ձանգեզուրը կտրված է քաղաքակիրթ աշխարհից, նրա առջեւ փակված են հաղորդակցության ճանապարհները: Ձանգեզուրցին հաշտվել է այդ հանգամանքի հետ՝ գտնելով, որ իր ազատությունը վեր է ամեն տեսակ հարմարություններից եւ կուլտուրական բարիքներից»:

Այս հանդուգն պատասխանն ստանալուց հետո անգլիական ներկայացուցիչը շտապեց հեռանալ: Եվ գործի անցան մուսավաթականները:

Դարաբաղի խնդիրը փակելուց եւ Հայաստանը մահմեդական ապստամբությունների վայր դարձնելուց հետո մուսավաթը սկսեց ուժեղ հավաքել Ձանգեզուրի շուրջը ցանկանալով երեք ծայրերից օղակել եւ արագ ու կտրուկ հարվածներով գրավել Ձանգեզուրը:

Վճռական գործողությունների անցնելուց առաջ Սուլթանովը մի կոչ ուղղեց զանգեզուրցիներին, որով համոզում էր գեներ հանձնել եւ հոժարակամ ճանաչել մուսավաթականների իշխանությունը: Ձանգեզուրցիք ակնհայտ չդրեցին Սուլթանովի հորդորներին, եւ նոյեմբերի 1-ին մուսավաթի զորքերն անցան ընդհանուր հարձակման: Վեց օր Ձանգեզուրի լեռներում որոտում էին թնդանոթներն ու զնդացիներն: Առաջին օրերին թշնամին գրավեց Լինաժախ, Խոզնավար, Բայանդուր, Կոռնիձոր գյուղերն ու Քաչալ Դաղը եւ սպառնում էր Գորիսին: Նոյեմբերի 3-ին զանգեզուրցիները մայիս ամսից Անդրանիկին փոխարինած Արսեն Շահնազյանի հրամանատարությամբ կանգնեցրին թշնամուն եւ կատաղի հակազորհներով փախուստի մատնեցին մուսավաթի բանակը, որը թողեց բազմաթիվ դիակներ, ավելի քան 150 գերի եւ հարուստ ավար: Մուսավաթական երկրորդ ծիավոր զուեղն ամբողջապես ոչնչացավ:

Ձանգեզուրը՝ շնորհիվ իր գավակների հերոսական ճիգերի, մի անգամ էլ փրկվեց մահացու վտանգից:

Անպարտել որոշումների ալիքով տարուբերվել, պարպուլել է Մեղրին: Վերին գյուղերից իջել են Մեղրի, Մեղրուց Երեւան: Վերին գյուղացիք մեղրեցիների առանձնատներն են գնել, մեղրեցիք՝ մի վանդակ ու կես կուն օդ Երեւանում: Հիմա վերին գյուղերում այլեւս մարդ, Մեղրիում տուն առնող չկա: Վաղը Մեղրիում մարդ, երեւանում շնչելու օդ չի մեք: Այսպես իրար ենք անցել ու հե՛չ չենք մտածում մեր սիրուն, մեր դմբո Հայաստանի մասին՝ ցավագրկեւանդամահատում են Աստված մի կողմից, մենք մյուս կողմից, ինքն էլ խելոք-խելոք բաց աչքերով անդամահատվում են. դառնալու է պրոֆետոր Դուլեյի գլուխ. մտածող, համճարեղ, բայց առանց ոտք ու ձեռքերի, գործելու հնարավորությունից զուրկ:

Խեղճ Արարտայան դաշտ, ո՞նց ենք չարաշահում գթասրտությունը: Մարդով, անասունով, գործարանով-բանով, զարգացման հեռանկարներով նստել, ծանրացել ենք շնչիդ ու սեղմվում, դեռ սեղմվում ենք:

Չէ՞ր լինի, որ անասնապահությունը Դափանի ու Մեղրու հայակարոտ սարերում «էլ ավելի» զարգացնեինք, տեխնիկումներից մեկ-երկուսը Մեղրու շրջանում բազմեցնեինք... Չէր լինի: Եղվելով, շնչակտուր լինելով՝ դու պիտի շալակի առնեիր: Իսկ բերք ու բարիքի, մաքուր կենցաղի Մեղրու արեւոտ հովտում, 644 քառակուսի կիլոմետրի վրա քանի տասնամյակ է արդեն բնակչության թիվը 13-14 հազարից չի անցնում: Մեղրին, ուշադիր նայեք քարտեզը եւ նրա շուրջ, որ անհրաժեշտաբար երեսուն-երեսունհինգ հազար բնակչություն

պիտի ունենար, այսօր ունի այնքան բնակիչ, որքան Նախիջեւանի Սարարակ գյուղը: «Պրի տոմ, հայությունը սաղ-սաղ 10 հազար էլ չի թամաճում»: Այո, «արի տոմ» Վարդանիձոր ու Դավիթ-Բեկ գյուղերում 1988 թվականին ոչ մի հայ մարդ չէր ապրում, ո՞նց սրտներս չէր պաշում:

Մենք Մանլեւ ու Ափկես գյուղերը մանրից լքում էինք, մեր «հեռատես» ղեկավարությունն էլ տարածքը կոլխոզով-բանով միացնում էր օտարաբնակ Աղարային, Ջուռջուղն էլ դեղին բերանով չարախնդում էր՝ «Գնում եք-գնում, բա ձեր պապերի գերեզմանը խի չեք տանում», ո՞նց սրտներս չէր պաշում:

Սրան ի՞նչ ամուն տանք՝ ինտերնացիոնալի՞զմ: Չէ, սա ինքնամերժում է, իսկ ավելի ուղիղ՝ հայրենադավություն:

Եվ երբ «Գարուն» ամսագրում 1986 թվականին Լեւոն Անանյանը հիշեցնում էր, որ դարասկզբի 32 գյուղերից այսօր քարտեզի վրայից իսպառ ջնջվել է մեծ մասը, որ շրջանի 4904 գյուղական բնակիչներից ընդամենը 1800-ն է հայ, գյուղաբնակ 990 երիտասարդներից՝ 230-ը, Լեւոն Անանյանի հարցը շրջկոմի բյուրո էինք մտցնում «Երեւի որպես մացիոնալիստ, հա՞», ու թիվը մի քիչ այն չէր, թե չէ Սիրիբ էին քշելու, խելքը գլուխը հավաքեք, ճիշտ չէ՞, նախկին ու ներկա որոշ ղեկավար ընկերներ...»

Այո, բայց դե «քստրեմիստ» ժողովուրդ ենք, ատուն-խոտուն, ջղայնացնում ենք, դուք ձեր բանին կացեք: Կարելոյն առողջությունն է, մեկ էլ, որ վերեններից խոսակցություն չգա:

Լավ, այ ժողովուրդ ջան. լեռնային Վանքը, Կալեբը, Թեյը, Նոր Արեւիկը լքեցինք, արեւանապահներն օտարազգիներ են (ի՞նչ): Ամեն բան սկսվում է առաջին չորանից, որ, ընտանյոք հանդերձ, 12-15 շնչով ընդունվում է ժամանակավոր աշխատանքի: Հետո՝ ընտանյոք հայտնվում է իր եղբայրը: Հետո՝ քեռու, հորաքրոջ տղեն: Դե մենք հո անասնապահ չենք, ամբո չէ՞, մեր գործը տեսչությունն ու հրահանգչությունն է՝ «պաշտոն, որ մեր մեջ ասած կարելի է գնել երկու պարկ բրդով»: Այո, մեկ էլ շրջկոմտնոցի փողկապավորված գալիս-տեսնում ենք, որ լքված տներից մի քանիսի երդիկից արդեն ծուխ է ելնում: Դպրոց էլ մի բոլուկ երեխեքին առանձնապես պետք չէ, նրանց դպրոցը սարի ու անասունի աշխատանքի կեն է, բայց դե՛ չէ, հարցեր կան, դպրոց էլ թող ինք: Կարելի է նաեւ դարակզբին դաշնակ ինպերիալիստների ձեռքով սպանված մի «սրբի» գերեզման տեղափոխել այստեղ ու վերջ մեր հողը, մեր պատիվն ու սրբությունն է: Պատվիրված է ի սկզբանե. ուղղահավատ, օտարի տանը հյուր եւ առաջին օրը, երկրորդ օրը դառնում եւ տան անդամ, երրորդ օրը՝ տանտեր:

Մենք էլ խոսք ունենք չվայելողի մալը վայելողին հալալ է: Ու հալալ ենք անում՝ երեկ տունը, այսօր գյուղը, վաղը՝ հայրենիքը:

«...Գարնան բացվելով, մայիսից սկսվեց թուրք թուրք թուրքերը պատրաստվում էին իրենց հուտերով բարձրանալ Ձանգեզուրի սարերը: Հաջողության դեպքում այն պիտի նշանակել ստույգ մահ զանգեզուրցիների համար: Եվ ասա, ինքնաբերաբար, իրարից անկախ, Սիսիանում, Գորիսում, Դափանում եւ Մեղրիում կազմվեցին տեղական մարմիններ, որոնք իրենց ձեռքն առան ինքնապաշտպանության գործը:

Հունիսի սկզբներին հազարավոր զինված թուրքեր խռնվեցին Հագարի գետի ափին պատրաստ զենքի ուժով բանալու սարերի ճամփան: Հարամի դուզ վայրում տեղի ունեցավ արյունալի ճակատամարտ, եւ թուրքերը պարտված, դիմեցին փախուստի՝ թողնելով բազմաթիվ դիակներ: Կարճ ժամանակ հետո Հաջի-Սամուրի թուրքերը հարձակվեցին Սիսիանի վրա՝ կանոնավոր միանալ թրքական Ջուլ շրջանի եւ այդպիսով Ձանգեզուրը կտրել Դարակազգից, բայց ջարդված քշվեցին այդ-

տեղից էլ: Ընդհարումներ եղան եւ Ջեյվա-Ագարակ գծի վրա, Մեղրիում. այստեղ եւս թուրքերը չդիմացան եւ փախան Օրդուբադի կողմերը: Այսպիսով, Ձանգեզուրն ազատվեց թուրքի մղձավանջից...»

Կասեք՝ խոսիր, ձենդ տաք տեղից է գալիս, գայիր Աստծո ու երկրի ղեկավարներից մոռացված ես լեռ ու ձորերում ապրեիր, ուր ոչ ճանապարհ կա, ոչ էլ կենցաղային տարրական պայմաններ՝ քեզ էլ կտեսնեինք: Այո, բայց Աստծո ու ղեկավարների դեմ կուտակված բողոք-վրեժը կարելի՞ է հայրենիքից հանել... Այսպես որ մտածեին՝ Դարաբաղում այսօր ոչ մի հայ չէր ապրի: Դարաբաղյան շարժումն էլ, բնականաբար, չէր լինի: Սուսուգայից ջարդերը կհետաձգվեին: Հնարավոր է նաեւ երկրաշարժը չլինեիր: Կապրեինք, էլի «սաղ, ուրախ, չաղ ու բախտավոր...»: Իշու ապանջին բնած:

Այսպես որ մտածեին՝ վերջին էսկիմոսը վաղուց արդեն մոսկվաներում չգիտեն, թե ինչ էր տալիս:

Արմեն ընկերս ասում է՝ երեւել Մեղրիում ծնված լինեի, Արարատի հետ կապվածությունս չլինեիր. Մեղրին շատ սիրեցի, բայց Արարատին Աստծո արած թուրք ու գրով են կապված:

Ցավը տանեն տեղային հայրենասերների. մեծ հայրենասիրությունը հենց տեղայինից է սկսվում:

Մեղրիում, ուզում եմ հավատալ, այսօր նրանք 13 հազար 300 հոգի են: Վերապահումս 10-11 հազարին ամենեւին չի վերաբերում, բուլոքս հենց թող նրանց չափ «տեղային» լինենք: Բայց շատ են ուզում, որ հենց 13 հազար 301 լինեն: Աս այն թիվն է, որ պակասելու տեղ չունի, որ վաղը, մյուս օրն Աստծով կրկնապատկվելու, եռապատկվելու է: Չէ, Աստծո հույսին չմնանք, գո՛րծ է պետք, գո՛րծ: Կրկնապատկվել է, չէ՞, ադրբեջանական Նյուվադին 25 տարում նույն հողի վրա, նույն պայմաններում: Տաշտունի գյուղամիջուս, իրիկնամածին, միայն Լեւոնի արձանն էր ու տակը նստած հարյուր տարեկանին մոտ երկու պառավ: Աղարայում, պատմում են, Ջուռջուղը Ստալինի արձանի տակ չորս զինված տղա էր նստեցնում: 53 թիվը ասել է վերաբրու՝ պաշտպանել է. «Ի՞նչ է խանգարում, ոչ հաց է ուզում, ոչ ջուր, իրա համար սահմանն է հսկում»: Վերջին տարիներին էլ, թե՛ «Թող ենք ծախսել, կանգնեցրել ենք, փողը տվեք՝ իջեցնենք»: Վերջին ամիսներին արդեն զենքով էր պաշտպանում: Եվ զարգացնում էր Ջուռջուղն Աղարայում «բուրդ ժողովուրդների հոր» զգոն հայացքի տակ ի հաշիվ Ափկեսի ու Մանլեւի: Իսկ մենք մեր հողի վրա, մի շրջան լիքը ղեկավարներով, գումարած երեսնամյա պաշտոնավորող մեղրեցի երկու մինիստրներն ու Կենտկոմի մեկ քարտուղարը Լեւոնի արձանի տակ մի Տաշտուն ու Լիճք վերականգնել չկարողացանք:

Իսկ Ջուռջուղենց կանչով ճանապարհը Մինջեւանից Վենժելիով գալիս էր, Շվանիձորով պիտի միջնել Մեղրի-Նախիջեւան հասնել: Գործող ճանապարհը քիչ էր, անպայման Մեղրու սրտի միջով անցնող ճանապարհ էր պետք: Ես մի անգամ ո՞նց գլխի ընկանք կոմե սրտներս պաշտպանել Նյուվադուց եւ զո՞ւն չհամաձայնեցինք առաջանան. «Ալեկին ականը խուլ»: Ադրբեջանաբնակ Նյուվադին շրջանի ամենաշեն գյուղն է: Իսկ մեզ թող հալածի կիսավեր գյուղերի տեսիլքը: Ի՞նչն է ավելի վաղ չկառուցվեց Դափան-Մեղրի ճանապարհը, ինչն է ժամանակից չտազանապեցինք դատարկվող գյուղերի բախտով, ինչն է թողեցինք, որ դանակը հասնի ոսկորին, հը՞, ինչուախեղդ ենք լինում, նախկին ու ներկա ղեկավար ընկերներ:

Ամեն ժողովուրդ, կասեք, արժանի է իր ղեկավարին:

Մենք չենք ընտրել ձեզ մեր գլխին ղեկավար, կասենք, տարիներ շարունակ ձեզ մեր գլխին նստեցրել են:

Ժողովրդի մեծությունն ու մակարդակը հենց նրանում է, կասեք, որ չթողնի իր գլխին նստեն:

Ամեն տեղ նույնն էր, կասեք, բայց էստոնացի ղեկավարն, օրինակ, իր ժողովրդի թիկունքին էր կանգնած եւ ոչ եւլած շալակը:

Եստույնացիների մեծությունն ու մակարդակը հենց այն է, կասեք, որ նշանակովի ղեկավարին անգամ կարողանում են իրենցով անել: Եստոնացի ղեկավարն էլ իր ժողովրդին իմանալով՝ երբեք չի համարձակվի շալակը ելնել... Եսին... Կարո՞ղ է իսկապես արժանի ենք, այ ժողովուրդ: Իմաստությունն էլ ասում է. «Որքան այն ազգը, որը չեփորներով է դիմավորում իր նոր իշխանին, բայց հեռացնում սուլոցներով, կրկին չեփորներով դիմավորելու մեկ ուրիշին»:





Մի քիչ մտածենք այս մասին... ու անցնենք առաջ:

Հայ ժողովուրդ ենք, սրտներս ելած մեր ցավերից խոսում ենք, իրարից նեղանալ չլինի. դուք, որ մեզանից դուրս եկաք, շատերդ անենելիքն էլ մերը չէիք: Ճշմարտությունը սա է: Փաստերով խոսենք: Խնդրեմ, կրկին դառնանք Մեղրուն: 1988թ. վերջին որոշումը թողնենք, կասե՛ք՝ «իլա նոր ենք ցրցած տվել, թե որ կարենք», 1975 թվական էլ չհասնենք՝ «ով կենդանի, ով մեռած», անդրադառնանք 1984 թվականի սեպտեմբերի 11-ի ՀԿԿ Կենտկոմի, ՀԽՍՀ Մինիստրների խորհրդի որոշմանը, տեսնենք՝ ինչ ենք թողել մաղի վրա:

Գրեթե բոլոր մինիստրություններին ու գլխավոր վարչություններին, ուրեմն, պարտադրվում է «Լրացուցիչ միջոցառումներ ձեռնարկել սեղմ ժամկետում ՀԽՍՀ Մինիստրների խորհրդի 1975թ. մայիսի 15-ի «Մեղրու շրջանի հարցերը» № 255 եւ 1977թ. հուլիսի 29-ի «Մեղրու շրջանի էկոնոմիկայի ամրապնդման լրացուցիչ միջոցները» № 420 որոշումներով նախատեսված միջոցառումների եւ առաջարկությունների կատարումն ապահովելու համար: Տասներեք էջանոց որոշումը փորձենք կարճ ու կոնկրետ ներկայացնել:

ՀԽՍՀ գյուղատնտեսության մինիստրությանը հանձնարարվում է

1. Այգիների պասպորտավորման աշխատանքներն ավարտելուց հետո առաջարկություններ ներկայացնել ոչ լիարժեք, ցածր բերքատու խաղողի այգիները դուրս գրելու եւ դրանց փոխարեն մերձարեւադարձային կուլտուրաների պլանտացիաներ հիմնելու մասին:

/Բա պլանը: Ինչ-ինչ ժամանակներից ի վեր Մեղրու շրջանի վրա խաղողի արտադրության պլան է դրված: Իսկ պլանի կատարումը պարտք է, գերակատարումը՝ պատիվ: Կեցցե պլանը: Եվ բացի դրանից շատ կիտրոն ու թուզ ունենանք, ուտենք, օրգանիզմներիս թզայնությունը կբարձրանա/:

2. Միջոցառումներ մշակել շրջանում խոզաբուծության ինտենսիվացման ուղղությամբ: /Ինչպե՞ս թե, սա չի նպաստի ազգերի ինտերնացիոնալիստական բարեկամությանը/:

3. Համապատասխան միջոցառումներ ձեռնարկել սեփական հոտի վերարտադրության եւ գնումների միջոցով կովերի գլխաքանակն ավելացնելու համար:

/Իսկ հարեւան հանրապետության հոտերը որտե՞ղ արածեն, մի քանի կով ու ոչխարի համար հո իրարից չենք նեղանալու/:

4. Առաջարկություններ ներկայացնել շրջանի՝ նախկինում վերացած գյուղերի վերականգնման մասին:

/Շտապելու կարիք չկա, շտապողի մերը տղա չի բերում/:

5. 1985-90թթ. ապահովել շրջանում 766կմ երկարությամբ միջտնտեսային ճանապարհների նախագծումն ու կառուցումը: /Լավ, էլի/:

Ավտոմոբիլային ճանապարհների շինարարության եւ շահագործման մինիստրությանը

1. 1984 թվականին որպես լրացուցիչ հանձնարարություն սկսել Մեղրու օդանավակայան եւ հեռուստատեսային աշտարակ տանող ավտոճանապարհների շինարարությունը:

/Հրաշալի օդակայանն այսօր ավելի շատ դեկորատիվ նշանակություն ունի: «Լրացուցիչ հանձնարարությունը» այդպես էլ ճանապարհի չի դառել: Այսօր էլ 1989թ. զարմանք, երեւանից «լրացուցիչ միջոցներ» են խոստանում: Խոստանում են նաեւ ինքնաթիռների ԱՆ-2 տեսակը փոխել ԱՆ-24-ով: Խոստանում են, էլի, խոստանալն էլ հո փողով չէ: Այ, թե մի ամուր ձեռք խոստացողի օձիքից բռներ, պոկեր փափուկ պռոռից, ԱՆ-2 ինքնաթիռով, նախանցյալ տարվա կերածն ու մեղքերը քթից բերելով, ռազմադաշտ հիշեցնող ճանապարհին պակասը լրացնելով՝ հասցնել Մեղրի ու տար ժողովրդի ձեռքը՝ հասկացնե՛ին, թե օդակայանի լիարժեք շահագործումն ինչ ահռելի նշանակություն

կունենա գոյություն ունեցող անջրպետը վերացնելու գործում:

Հայգլխշին վարչությանը

1. Շարունակել Մեղրու շրջանի տնտեսություններում 476հա հողատարածություններին մեկտրոնացումը:

/Պատերին խաչ քաշենք. 30 հա արդեն մեկտրոնացվել է/:

2. 1984թ. սկսել Լիճքի ջրամբարի շինարարության նախապատրաստական աշխատանքը, եւ շինարարությունն ավարտել 1986թ.:

1984-85թթ. Ափկես տեղանքի շրջակայքում ջրամբար կառուցելու նպատակով կազմել նախագծային փաստաթղթեր:

/Գնացիք-գնացիք շատ թե քիչ, մին էլ տեսանք երկու ի՞նչ... ինչա-ինչ-ինչարան, ինչին տարան դատարան/:

ՀԽՍՀ բնակարանային-կոմունալ տնտեսության մինիստրությանը

1. Ուսումնասիրել եւ մինչեւ 1984թ. վերջն առաջարկություն մտցնել Մինիստրների խորհուրդ՝ Մեղրու շրջանի գյուղերի ու շրջկենտրոնի ջրամատակարարման եւ կոյուղավորման հարցերի լուծման վերաբերյալ:

/«Ախորժակներդ քացախ, կասեր գյուղ-խորհրդի մի նախկին նախագահ, որի աշխատանքը երեսուն տարի գնահատել ենք բավարար, գացեք, յուլա գացեք»/:

Պտուղ-բանջարեղենի տնտեսության մինիստրությանը

1. Զննության առնել Մեղրու շրջանում պտղի արտադրության եւ այն վերամշակող ձեռնարկությունների հեռանկարային զարգացման հարցերը:

/Պա՛հ/:

2. 1984-85թթ. շրջանում տեղադրել պտղի ընդունման եւ մշակման լրացուցիչ կետ: /Պա՛հ, պա՛հ, պա՛հ.../:

1985-86թթ. երեք հեկտար տարածության վրա կառուցել ջերմոցային տնտեսություն: /Պահո՛/:

ՀԽՍՀ արդշին մինիստրությանը

1 Առաջարկություն ներկայացնել երկաթբետոն կոնստրուկցիաների արտադրության գործարանի կազմակերպման մասին:

/Առաջարկություն ենք ներկայացնում Մեղրիում երկաթբետոն կոնստրուկցիաների գործարան կազմակերպելու առաջարկություն ներկայացնելու մասին: Չեր հիշաչարությանն ենք ներկայացնում նաեւ չարչրկված հետեյալ փաստը: Մեղրու գյուղերում բնակարաններ կառուցելու համար պայմանագրերը պատրաստ են, նախագծերը կան, կապալառու կազմակերպությունները, սակայն, բազմաթիվ օբյեկտիվ եւ ոչ օբյեկտիվ պատճառներով գործը չեն ստանձնում: Փող ունեցող կա, իրացնող չկա: Ի՞նչն է խանգարում, որ Մեղրին սեփական շինտրեստ ու բազա ունենա: Ավելի ճիշտ՝ ո՞վ է խանգարում Ալիեւն ու Կեռոկո՞վը.../:

Տուրիզմի եւ էքսկուրսիաների հանրապետական խորհրդին

1. Ուսումնասիրել Մեղրու շրջանի տարածքում հանգստի ու տուրիզմի համալիրի կառուցման հնարավորությունները եւ 1985թ. սեպտեմբերին առաջարկություն ներկայացնել Մինիստրների խորհուրդ:

/Հանրապետական խորհուրդ, ուսումնասիրե՛լ ես... Ես ասում եմ չես ուսումնասիրել: Ես ասում եմ՝ Գառնի-Գեղարդից բացի հրաշք Չանգեզուր ունենք, Գորիս ամենահայեցի, ամենագողտրիկ քաղաքը՝ իր չնաշխարհիկ բնությամբ, այսօր միութենական ու միջազգային տուրիզմի կենտրոն էր լինելու, ինչո՞ւ եք դրել տակներդ, մտտել վրան: Արեւիկ-Մեղրին, մեծ աշխարհից կտրված շնչառեղծ է լինում, իսկ Լիճք-Տաշտուն տեղանքը թե լեզու ունենար, կաղաղակեր՝ ես Բակուրիանիին ոչնչով չեմ զիջում, վրաս մի դահուկացատկի ոստնակ ու երկու առողջարան շինե՛ք տեսե՛ք, թե աշխարհի բոլոր կողմերից որքան տուրիստ ու փող են հավաքում, ջահելությանս աչքը ոնց են կտրում դրսերից, մեծ երկրի կարոտը սրտերում մարում, ապահովում են աշխատանքով ու հավերժ պահում փեշերիս կպած/:

Քաղաքականության դեմ խաղ չկա: Այո: Ավելի լավ է անհրաժեշտ չափով ներմուծես, քան թե ինքը քեզ հորձանքի մեջ առնի-տանի: Մի հզոր առողջարանի գոյությունը, թույլ տվե՛ք ասել, Մեղրու համար հինգ գործարան կարժե՛նա:

Վերելներում ասում են՝ սահմանամերձ գոտի է... բացատրենք-հասկացնենք, որ ողջ Հայաստանն է, այ ընկերներ, սահմանամերձ գոտի: Եղ գոտում ատոմակայան ու քիմիական գործարաններ կառուցել կարելի է, առողջարան ո՞չ: Շախտերի հետ կապված բա՞ն է... Խնդրեմ, Լիճքի գիշերօթիկ այնպես է կառուցված, որ չորս-հինգ ամսվա վերակառուցումից հետո կարող է հրաշալի տուրիստական հանգրվան դառնալ: Մի՛ շտապե՛ք բարկանալ, գիշերօթիկն իր նպատակին չի ծառայում: Սովետաշենից բերման ենթարկված քառասունութ սաներից լավագույն դեպքում յոթ-ութը Մեղրիում չեն բնավորվելու: Բնավորվելու համար տուն էլ չեն ունենալու, իսկ առողջարանը, հասկացե՛ք, շատ է անհրաժեշտ:

ՀԽՍՀ պետպլանին

1. Լուծել շրջանում բնակչության, հատկապես կանանց աշխատուժը լրիվ օգտագործելու նպատակով նոր ձեռնարկությունների կազմակերպման հարցը:

2. Տասներկուերորդ հնգամյակի պլաններում նախատեսել Մեղրու շրջանի զագիֆիկացման ներքին ցանցի, 300 տեղով պիտուր ճամբարի, Կուրիսի կուլտուրայի տան նախագծման եւ շինարարության աշխատանքները:

/Տես ջրամատակարարման մասին գյուղ-խորհրդի նախկին նախագահի ասածը/: Մոտավորապես այսքանը:

Թող անկեղծությունս ներվի 7-8 տարվա հեռավորությամբ ես ենթրին են տեսնում Մեղրու կուսշրջկոմի առաջին քարտուղար: ԼԿԵՄ շրջկոմի առաջին քարտուղար է (չվախենաք, պապայի բալիկներից չէ), լուրջ ու պինդ հայ ՇԱՐՈՒՆԱՎՈՒՅՅՈՒՆԸ է՞՞ 6

Հայի վերջին խելքը

Մեղրի, 1988-89թթ.

ՍԿԻՉԲԸ ԷՏ 5

տղամարդ է։ Եվ երիցս կներեք՝ համոզված եմ, որ Ենոքի՝ մեր սերնդի չճահճոտված տղերքն են երկիրը դուրս բերելու եւ որտեղի՞ց՝ ինքներդ գիտեք։

Ենոքը, Ալդարայի գյուղխորհրդի նախագահ Պողոսյան Գրիգորը, որ Աբովյան քաղաքում տունուտեղը, կոոպերատիվը թողել, Մեղրիում հայ գյուղ է ստեղծում, երկիր է պահպանում, Մարալզամիի կոլտնտեսության նախագահ Վլադիկ Գեւորգյանը՝ Երեւանից վերադարձած մեղրեցի, գեղագիտական կենտրոնի հիմնադիր ու տնօրեն Ավագ Հայրապետյանը, Շվանիձորի գյուղխորհրդի նախագահ Միշա Ոսկանյանը, Մարտիկի, Արտուշի ու Մերգոյի նման տղերքը, որ ազգի ծառը ջրող են, ոչ թե ճյուղից կախ մանեկեն խաղալիք։

...Աշտարակից Ուջան, ելելէջուն ճանապարհով, ցեխ ու անձրեւի, արեւ արթալոթյան, ծյուն ու բուբի միջով փոքրամարմին մի մարդ է առաջանում։ Երգի դասատու է։ 1919-20 թվերին Թիֆլիսից Երեւան, Երեւանից Աշտարակ երդունով է եկել... Կոչեր հրատարակողներ, ամեն տեսակ կոմիտեներ, խորհուրդներ, միություններ, խմբեր ու խմբավորումներ Թիֆլիսում ավելի շատ են, քան զորամասեր ռազմաճակատում։ Վանից մինչեւ Երզնկա։

Մինչ Անդրկովկասյան իշխանությունը զբաղված է բանակցություններով, մինչ հեղափոխական կենտրոններում հնչում են անվերջ ճառեր, հրապարակային ժողովներ են կազմում եւ կոչեր հրատարակում, հայ մտավորականությունը շառաջուն բանաձեւերով իրեն դնում է «Ազգային խորհրդի» տրամադրության տակ՝ Հայաստանը կենվոտուն-փոքրանում է, մնացել է մի սրտաչափ, եւ Արամ Մանուկյան անունով հրաշալի հայն է վերծանում վիրտուն սրտի գիրը։ Հողի վրա գտնվողը իրավունք ունի խոսել հողի մասին։ Հողը ոտքերի տակից փախչում է, արձաքամ հայրենիքն իրենցից հրաժարվում է, իրենք հայրենիքից չեն հրաժարվում։

Վիրավոր արծիվ նման Գարեգին Նժդեհն է ծեփվել Չանգեզուրի կրծքին, պոկ չի գալիս։ Պոկ չեն գալու, առամներով պահելու են մի բուռ հողը՝ որպես բույն, Երեսանը՝ բնկալ։

Մենք, որ միանություն ունեցանք կարծելու, թե հավասարության ու եղբայրության մեր ժամանակներում ատամներով երկիրը պահելու առիթ չենք ունենա, այսօր կանգնա՞ծ ենք փաստի առաջ... Նայենք հանրապետության քարտեզին եւ նրա շուրջ. կա՞ մի հատված, որ պաշտպանության, ատամներով պաշտպանության կարիք չունենա։ Կդիմանա՞ն մեր խեղճ ատամները, որ շատ ու սուտ խոսելուց թուլացել՝ սեւանում են, որ հազարամյակներ շարունակ համրվել են ուն կողմից ասես, ու դեռ համրվում են։ Ախտորոշո՞ւմը՝ մատ կոխես բերանը, չի կծի։ Պիճո պահենք մեր ատամները՝ եթե ոչ մեկ-մեկ կծելու, գոնե արյունախառն բերանից չթթելու համար։ Չմոռանանք՝ ատամի կորուստը երազում անգամ հարազատի մահ է։

Պետալանի նախկին նախագահ Բայբա կովն էլ մեր ատամները հաշվել էր, երբ Կոստանի ցուցումին հակառակ գազամուղը Պարսկաստանից Հայաստանի տարածքով չէր տանում կանգնեցնելով մեզ ատոմակայանի փաստի առաջ։ Չկծեցինք, լա՛վ, հնարավոր չէ՞ր մատը բերաններիցս հանել, ադամանդով զարդարել ու դնել գլխներիս. աշխարհին է հայտնի այն տարիների լավագույն մեթոդը դա էր, ընդօրինակելու փաստերն էլ՝ ծով։ Թե՞ ադամանդ չկար... Ոչ մի արդարացում չկա, սուտ է, մի բուռ մնացած հայրենիքը պահպանելու համար ոչ մի դժվարության առաջ չպիտի խեղճանաս։ Մեղրի-Քաջարան ճանապարհը տարվա 6 ամիսներին անանցանելի՞ է՝ թունելային ճանապարհ չի՞նրի։ Միջոցներ՞ը չկան մի տեղից կտրիր, դիր մյուսի վրա։ Քո տունն է, քեզ տերուտիրականի նման պահիր, դու ես վանքից գալիս, մի թող ուրիշներն ասեն՝ «Ողորմի աստված»։

Տարբերակված մոտեցում է պետք, ժառանգության հարցում տան բոլոր գավակներն էլ հավասար են, բայց երբ իրենցից մեկնումեկը նվագ ու հիվանդ է, հայրական, եղբայրական հատուկ ուշադրություն է պետք։

Տար, ամեն բան էլ հարցրու՝ ընդհուպ մինչեւ վիդեո ու աղջիկներ, միայն մի թող հիվանդիդ աչքը ճանապարհին, մի թող գյուղերդ ամայանան, հայրենիքի հիմքը գյուղն է, առանց գյուղ հայրենիք չկա, վերջ...

Շարքային եմ, հավատ տուր-ուղարկիր Մեղրի, ուղարկիր Սպիտակ եւ Լեւինական։ Օգնողներին՝ հազար շնորհակալություն, բայց իմ շապկին իմ մարմնին ավելի մոտ է, իմ տունն առաջին հերթին թող ե՛ս կառուցեմ։

Շահասեր եմ, հա։ Խոպաններից ոտքս կտրիր, մեկ տուր՝ երկու պահանջիր։ Ռանչպար եմ. հող տուր՝ բերքը պահանջիր։

Ուրքս առանց այն էլ փոքր է՝ 29 համար, ինձ 24 համարի կոչիկ մի՛ պարտադիր. խեղդվո՞ւմ եմ, ցիանդամ, թե հանելիս «կայֆ» չէ։

Սրտիս ցավից լաց եմ լացում՝ բարձրախեղդ մի՛ արա, ծիծ տուր։ Չեմ ուզում անկառավարելի լինել, վրաս մատ թափ մի՛ տուր, ձեռքդ դիր ուսիս, ինձ տիրություն արա, որ զալիք ամենամեծ երկրաշարժին փլատակի տակ հենց ե՛ս չմնամ, որ փոթորիկների բերանն ընկած պատեպատ չզարկվեմ, ուժերս անտեղի չպարպեմ, ծանրության կենտրոնը ճիշտ, ոտքի վրա հաստատուն, լրիվ մնամ։

Թուրքիայի եւ Ադրբեջանի միացման մեկ օդակն էլ Գողթն գավառակն էր՝ հազիվ 20-25 գյուղ ունեցող հայկական մի շրջան կծկված բարձրաբերձ լեռների ու Արաքսի մեջ։ Գողթնը եւ Արեւիկը (Մեղրի) գառուն էին Բաքուն Նախիջեւանից։ Վերացնել մեջտեղից այս հայկական շրջանները, նշանակում էր ուղիղ ճանապարհ բանալ Բաքվի, Անգորայի եւ Պուլսի միջեւ։ Ուստի, տարօրինակ չպիտի թվա այն համառոտությունը, որով բուրքերն ամեն առիթով աշխատում էին գրավել Գողթնը եւ Արեւիկը։ Երբ Բաքունի դաշնագրից հետո թուրքերը եկան Նախիջեւան, նրանց առաջին գործը եղավ Գողթնի նվաճումը։ 1918 թվականի հուլիսի 25-ին թուրք զորքը մտավ Ազուլիս։ Շնորհիվ իրենց ճկուն բնավորության, գողթնցիք կարողացան զլուխ պահել իսլամական իշխանության տակ... մինչեւ 1919թ. հուլիս-օգոստոս։

Ազուլիսցիները համակերպվել էին թրքական իշխանությանը, հեռացրել էին իրենց միջից կռվող ուժերին եւ դրանով իսկ ուզում էին պահել իրենց գոյությունը։ Դեկտեմբերի 18-ին, սակայն, Օրդուբադի թուրքերը հարձակվեցին եւ սկսեցին թալանել Ներքին Ազուլիսը։ Հայերը, թողնելով իրենց ամբողջ ունեցվածքը, փախան Վերին Ազուլիս։ Վերջինիս ներկայացուցիչները դիմեցին Օրդուբադ թուրքական հրամանատար Էդիֆ բեյին խնդրելով ապահովել հայերի կյանքը։ Սա հանգստացնում էր երդվում եր անվերջ, թե հայերի գլխից մի մազ չի պակասի...

Դեկտեմբերի 25-ին քաղաքում լավեց հրածություն եւ աղմուկ, թուրք խուժանը թալանում եւ կոտորում էր հայերին... Դեկտեմբերի 31-ին հնդկաեվրոպական հեռախոսագծով հեռախոսը ստացվեց Թավրիզից. «Քարտեզի վրա Ազուլիսն այլեւ գոյություն չունի. Ներսես եպիսկոպոս»։

Իրագործվում էր հարավային Չանգեզուրը, Գողթնը, Օրդուբադը ու Նախիջեւանը Թուրքիային հավաքարին մարտական տարրերով բնակեցնելու եւ այդ նպատակով առաջին հերթին Նախիջեւանի շրջանի հարավային մասը հայ տարրերից մաքրագործելու ծրագիրը։ Ազուլիսի կոտորածն այդ ծրագրի առաջին քայլն էր։

Հայկական բողոքները ոչինչ արժեք ունեցան դաշնակիցների մոտ. նրանք սահմանափակվեցին միայն ցավակցություններով, սաստուններով եւ գործնական միջամտությունից խուսափեցին։ Ի՞նչ մի առանձնակի բան էր պատահել. երկու գյուղ էր ավերվել, 1000-1500 մարդ էր կոտորվել, արժե՞ր դրա համար իրար խառնվել։

Մեղրեցիք՝ գենքը ձեռքներին, իրենց հողը պաշտպանեցին։

Հենց ազուլիսցիների պահանջով ինքնապաշտպանության ուժերի ազդեցությունը չէր տարածվում ազուլիսցիների վրա. այդ ձեւով հույս ունեին մեղմել թուրքերի եւ արժանակալ նրանց բարեհաճությանը։ Բնորոշ է, որ այստեղ էլ առաջին սպանվողները եղան, այսպես կոչված, «թրքասեր», «օտարամուլ» հայերը։

Չէ, 1988 հրաշալի-հրեշավոր թվականը շատ բան փոխեց մեր կյանքում։ Աշխարհասասն երկրաշարժին նախորդել էր հոգե-

ցունց երկրաշարժը, որ ժանգաթափ է արել մեր ներսը։ Ղարաբաղյան սրտալի շարժումն ինչպես էլ որակեն՝ էքստրեմիստական, ազգայնամուլական, թե սիոնիստական, աստված է վկա, այն ընտանիքի կյանքն ու պատիվը պաշտպանող տղամարդու ցատունի նման ազնիվ ու մորը կորցրած մանկան լացի պես սրտակեղեք էր։ Այլ հարց է, թե ում ինչպես էր ձեռնտու տեսնել։ Այո։ Եվ՝ թե ազգային գիտակցության մեր ծառի ճյուղերին դեռ ինչ պտուղներ են հասունանալու՝ ժամանակն ու սերունդները վկա ու դատավոր։

Ո՞ր երկրաշարժն էր, որ Ալդարայում տապալեց Ստալինի արձանը...

Ջունշուրը խռովել-զմացել է։ Ասել եմ՝ «Գնում ես՝ գնում» արձանն էլ հետո տար»։ Տղերքը տեղում Անդրանիկի արձանն են կանգնեցնելու, որ նորաստեղծ հայկական մանկապարտեզի ու դպրոցի օտարակեզու հայ մանչուկները Հոկտեմբերյանից եկած տեր ու տիկին Միքայելյանների օրհնությամբ տեսնեն ճանաչեն Ջորավարին, երգեր երգեն իր մասին, երդվեն իր արեւով։ Արեւը, ճիշտ է, աշխարհում միակն է, բայց մայր Արեւից յուրաքանչյուրս իր բաժինն ունի։ Դա է պատճառը, որ ուրիշ տեղի արեւը մեզ չի ցերմացնում, դրա մասին է, որ երդվում-ասում ենք՝ իմ արեւ, հորս արեւ, Անդրանիկի արեւը...

Մեղրու Սուրբ Աստվածածին եկեղեցու զանգերի ղողանջից հոգիս փառավորվեց ու մի քիչ թեթեւացավ, իմ արեւ։ Տասնյոթերորդ դարում կառուցված եկեղեցին, որ քանի տասնյակ տարի չէր ղողանջել, իր դուռը բացող վանահայր ու ժողովուրդ ունեցավ։ Էլի փառքը շատ, մեր բաժին Աստված, որ մինչ այդ Ամարասի օծմանն էլ մեզ արժանացրիր։ Դո՛ւ էլ միայն «երկրաշարժի հետեւանքներով ես զբաղված», թե՛ Մեղրում օգնելու ժամանակ էլ կզոնես։ Թե կզոնես, օգնիր հոկտեմբերյանցի բժշկին՝ վերականգնի հայրենի Ավիկես գյուղը։ Էլի ամիկեսցիներ կան, որ ուզում են վերադառնալ, տիրություն անել հայրական օջախներին. սատար կանգնիր։

Վարդանիձոր սուրբ անունով գյուղն էլ ամբողջապես հայաբնակ է։ Հազարից ավել հայ մարդ է վերաբնակվել այսօր Մեղրու շրջանում, աչքը վրաները պահիր։

Թե Մարալզամիի Վլադիկին էլ օգնես, գյուղը գյուղ ու Թիկուտ դարձնի թեզանից գոհ ու շնորհակալ կլինենք։ Շատ բան չենք խնդրում, որ շուտ չմոռանաս, ու շատ չհամարես։ Մի բան էլ կա, էն էլ հետո կխնդրենք։

Իսկ Մեղրի-Քաջարան թունելային ճանապարհի համար թող նորընտիր դեպուտատը պայքարի։ Նախընտրականում խոստացել է։ Ծննդատեղի թողնենք առողջապահության մինիստրի խղճին ու տեղային հայրենասիրությանը։ Վխր, տասը եւ ավելի երեխա ծնած վերջին հայ մայրը Մեղրու շրջանում ութսուն տարեկան Արաքսյա մայրիկն է՝ լուսահոգի երվանդ պալու կինը։ Խրախուսման նպատակով մի «Վուզանի» ի՞նչ է, էն էլ թող գործկոնը տա։ Պիտի տանք, չէ՞, որ պահանջելու իրավունք ունենանք։

Այո, հողն էլ աստիճանաբար պիտի տանք գյուղացուն։ Սկզբում գոնե համեմատաբար վատ ու անմշակ հողը։

Չկան վատ հողեր, աշխարհում ոչ մի տեղ վատ հողեր չկան, բորբոքվում է Արմեն ընկերս, կան հողի վատ տերեր։ Մեր երկրում հողօգտագործման նոր ձեւ է հարկավոր։ Փաստն այն է, որ գյուղում գյուղացուն հողն է պահում, կենարար ու կենդանի հողը, որ ապրանք ու արդյունք է տալիս։ Քեզանից պորբլեմներ մի՛ հորինիր, համարձակորեն տու՛ր հողը գյուղացուն, ու որ տաս՝ մահակով էլ ճղես, ուրիշներին չգիտեմ, բայց հայ գյուղացին հողից չի կտրվի...

Հա, համաձայնում եմ, բայց ինչո՞ւ ես տաքանում, քո ասածն ո՞ւմ չի հայտնի։ Փառք Աստծո, արդեն կառավարական որոշում էլ կա։

Կա, ասում է, բայց մի չինովնիկ ցանկություն ու տրամադրությունը հաճախ ցանկացած որոշումից էլ ուժեղ են դուրս գալիս։

Գիտեմ, բայց Մեղրիում գոնե այդպես չէ. ղեկավարությունը հողն ավելի ու ավելի համարձակորեն է տրամադրում անհատներին։ Մեզանից լավ են հասկանում, որ Մեղրիում դա հատկապես անհրաժեշտ է։ Վահրավարում, օրինակ, հողն ամբողջովին անհատական մշակման տակ է։ Շվանիձոր հրաշալի գյուղում, մեր են գործում։ Եվ, ընդհանրապես, Մեղրիում այսօր լավ գործեր են կատարվում։

Որ էդպես է, քմծիծաղում է, դու ինչո՞ւ ես սիրտդ պատռում, ամեն բան էլ լավ կլինի։ Ինչո՞ւ... Որովհետեւ վախենում եմ։ Վախենում եմ, որ ես հովերն էլ անցնեմ, ու

Մեղրին մնա հին ցավերով լեցուն իր հին տաշտակի առաջ։ 1988 թվականն անցավ՝ 1989-ի կեսն էլ հետը. Երեւանից քանի՞ պատասխանատու ընկեր է եղել Մեղրիում, տեղում քանի՞ հարց է լուծվել... Ցո՛ւյց տվեք՝ կոխեք աչքս, իմ արեւ ուրախ կլինեմ։

Գրող Շահին Թաթևյանն էր շրջանում։ Հինգ-վեց տեղից վիրավոր, յոթանասունն անց, չալիկով քայլող տղամարդ է։ Խոսելիս անգամ հեւում է։ Այո, բայց Հայաստանում չկա երեւի քաղաք ու շրջան, ուր մազը կրակին տային, ու Թաթևյանը հավարին չհասներ։ Ցավ ունի սրտում մարդը, ու թռչող սրտի հետեւից մի կերպ, չալիկով, բայց հասնում է։

Սրտացավության պակասից եմ վախենում։ Ցավի առուժախից եմ վախենում։

Վախենում եմ Լիճքի ու Տաշտունի, Մարալզամիի համար, որ նախագահ ունի՝ աշխատող չունի, տներ ունի՝ բնակիչ չունի։ Բնակիչների հետեւից Վաղիկն էլ տեղ չմնաց, որ չզմաց, չեն գալիս, պանսիոնատներում, գետնախորշերում անգամ ծվարել են՝ Մեղրի չեն գալիս. «հեռու է»։ Ինչի՞ց է հեռու՝ իրենք էլ չգիտեն։

Գաղթականների համար եմ վախենում, որ ես վերջին հանգրվանում էլ իրենց տեր չեմ զգում, հյուր եմ զգում։ Երկիր է, սիրելի եղբայրներ, հյուրանոց չէ, գաղթելու էլ տեղ չունենք, վերջ։ Դուք հայ ազգի վերջին գաղթականներն էիք, չհանձնվեցի՞ք, որ մեր փրկությունը ես մի բուռ հողի վրա է։ Ուրիշի բնում ձու դնող թռչունին հանդուրժում եմ, քանի դեռ կչկչալով ձու է ածում։ Դրանից հետո... ինձանից լավ գիտեք, թե ինչ են անում դրանից հետո...

Մեր հացն ուտող, ուրիշի դռանը հաչող շնեից եմ վախենում։

Մեզանից եմ վախենում, որ միլիոնանոց միտինգներից, Սումգայիթից ու երկրաշարժից հետո էլի մեկմեկու անվերապահորեն սիրելիներել-հանդուրժել չսովորեցինք։ Բռունցքված ձեռքն այսօր բուռ է դառնում եւ գրանցում ու աշխատատեղ է վաճառում գաղթականին, տնակ՝ աղետյալին։ Մի սուտ բանի համար ավտորուտում կարող ենք մեկմեկու զլուխ ցարդել, հինգ ռուպե անց ինքներս մեզ վարկաբեկել. «ազ չենք, էլի», կես ժամ հետո վանկարել՝ «մի-ա-ցում»։ Հազար անգամ ասել ենք, որ մեր փրկությունը մեր միասնական ուժի մեջ է, բայց այնքան ենք իրարից հեռու, ասես իրավապահ մարմինների աշխատողներս այլ ազգից ենք, գործարարներս ուրիշ, մեկլներս ու են մեկլներս՝ լրիվ ուրիշ... Մի՞նչդես, հայ գյուղացին, հայ շինարարը, հայ գիտնականն ու կառավարիչն այսօր առավել, քան երբեւէ, պարտավոր են մեկմեկու հանդուրժել-օգնել՝ դառնալ աշխարհի ամենալավ հողագործն ու շինարարն ու գիտնականն ու կառավարիչը։ Եվ ամենալավերի հավաքականությունը կդառնա ամենակարող ուժ։ Ուրիշների քանակի դեմ որակ, այլ ելք մենք չունենք։

Որակազրկումից եմ վախենում. կեղծ դիպլոմներից, սուտ կոչումներից, ծակ փիլիսոփայությունից, գաղափարազարությունից, բոշայությունից. ոռքացությունից, ծախված դիրքերից...

Կեղծ ինտերնացիոնալիզմից շատ եմ վախենում։

Վախենում եմ։ «Ղարաբաղ» կոմիտեի տղերքի ճակատագրի համար։

Մեղրու իննհարկանի շենքերին նայում ու վախենում եմ անպատիժ պատասխանատվությունից։ Նոր երկրաշարժից եմ վախենում, հնի՛ հետեւանքներից։

Ազարակի մոլիբդենի կոմբինատի թափոններից եմ վախենում, ծիրանիների չորացումից։ Է՛ն, ամենաառաջին ճյրանի հայտնությունից եմ վախենում։ Չէ, հայտնությունից չէ՛ մեր կանչել-բերելուց եմ վախենում։

Վախենում եմ մեր խելքի չգալուց։ Ամենից շատ վախենում եմ նրանցից, ովքեր ոչ մի բանից չեն վախենում, բացի աթոռ կորցնելուց (թե ունեն)։

Վախը պարպելու ամենալավ միջոցն, ասում եմ, գոռալն է՝ ուզում եմ գոռալ-աղաղակել իրենց հավաքական, անվախ ականջում. Հայրենակիցներ, վախենում եմ... Չէ, վախ բռնողի մոտ մի՛ տարեք. վախս կիսեք։ Մեր փրկությունը նաեւ մեր հավաքական վախի մեջ է։ Հավաքական ուժ, գումարած հավաքական վախ, գումարած հավաքական խելք։ Հայի է՛ն, վերջին խելքը, որ մեզ հիման է պետք։ Թե չէ՛ ամեն կողմից պատրաստ սպասում են, նայեք, քրքիջն աչքներում, որ տեսնում է պայթել. «Հայի վերջին խելքն իմը լինե՛ր... Չէ, մեր խելքը մե՛զ եւ այսօ՛ր, հի՛ մա է պետք։ Խելք խելքի, եղբայրներ, ուս ուսի, եղբայրներ, վախենում եմ...

Տանձապարսի անձնագիրը

Վ Գրախոսականի փոխարեն



Փագիկ Չայրումյան

թ. Մոսկվա

Հաճելի անակնկալ էր, երբ ստացա Սուրեն Վարդանյանի «Հինավուրց Տանձատափ» գիրքը, հեղինակի «Հին օրերի անկեղծ հիշողություններով...» մակագրությամբ: Չգիտեի, որ աշխատում է այդպիսի գործի վրա: Նախ գարնան ցառ է, իհարկե, շատ ուրախացա: Նույն «հին օրերի անկեղծ հիշողություններով» ձեռքս առա գիրքը, սկսեցի ընթերցել և ավարտեցի գրեթե մի շնչով: Այն գեղեցիկ ակնարկ էր աշխարհի թոհուրոհից, մեծ խաչմերուկներից հեռու կուսական մի ծոռի աթոռակի վրա ծվարած փոքրիկ, հնամենի գյուղի անցյալի ու ներկայի մասին՝ շաղախված ժողովրդական ավանդապատումներով, տարբեր սերունդների մարդկանց մասին հիշողություններով ու նորոգյա պատմություններով, պատմական փաստերի ու գրավոր աղբյուրների մեկնաբանություններով, հայրենի բնության, ծննդավայրի նկատմամբ անսահման սիրո, հոգատարության, ցավի, ափսոսանքի ու նվիրումի զգացողությամբ:

Սուրեն Վարդանյանի ուղեկցությամբ 70-ականների սկզբներին տարբեր առիթներով եղել են Տանձատափում: Նորից մտովի պատկերացան բնության անձեռակերտ հուշարձաններ Սպիտակ ջուրը, Հարսնաձորը ու Հարսնավազը, Կարմիր քարի քարափն ու Մեծ ձորը, Մեծ գետն ու Մեծ ջրվեժը: Հիշողությունները կրկին ինձ տարան փռերը, իշխանադուստր Շահանդուխտի մատուռը, այդ փոքրիկ գյուղի եկեղեցիները: Երախտիքով հիշեցի Սուրենի մորը՝ Գայանե Վարդանյանին, որ հացով էր, բարի, հոգատար, միեւնույն ժամանակ պահանջկոտ ու անհաշտ՝ թերությունների հանդեպ: Գիրքն ընթերցելիս չորս տասնամյակի հեռավից կարծես կրկին իմ առջեւ կանգնել էր երիտասարդ գյուղմասնագետը, ով նոր էր վերադարձել բանակից, դեսանտային էր եղել, աշխատում էր կոմերիտմիության շրջանում և աշխարհի կողմից մոռացված իր գյուղի մասին պատմում էր ակնածանքով, երախտագիտությամբ, ուզում էր, որ դու էլ իր նման ճանաչես ու սիրես իր ծննդավայրը, նրա մարդկանց, ամեն մի քարն ու ծառը: Յուրօրինակ ճակատագրով գյուղ է Տանձատափը: Ընդհանրապես Հարսնադ-Այունիքի վերաբերյալ գրավոր պատմական աղբյուրները շատ քիչ ու սահմանափակ են: Հաճախ են մտածել՝ ի՞նչ կլինեք, եթե հանկարծ գրված կամ պահպանված չլինեք Ստեփանոս Օրբելյանի հայտնի գիրքը՝ «Այունիքի պատմությունը»: Այն ոչ միայն վկայագիր է, այլև՝ ծխամատան, հանրագիտարան, որին առաջինն ենք դիմում ինչ-որ բան ճշտելու կամ հաստատելու համար: Նման երկրորդը չկա, մյուսները լրացումներ են միայն: Եվ քանի որ



Տանձատափը միշտ դիտվել է իրեն Տաթևի եկեղեցական համալիրի մաս, սեփականություն, հարկ չի համարվել առանձին գրել ու խոսել նրա մասին: Այստեղ են օգնության եկողը Ստ.Օրբելյանն է, որ տալիս է վանքին հարող տարածքների նկարագիրն ու նրանց հետ կապված ավանդապատումները: Ս. Վարդանյանը, գոյություն ունեցող աղբյուրներին հարազատ, իբրև տեղանքին ծանոթ, խոսք ու գրույցներին լավատեղյակ ուսումնասիրող, քայլ առ քայլ ներկայացնում է բնության այս գողտրիկ անկյան մանրամասները, կարելի էր եզրակացություններ է անում պատմական անցյալի վերծանման, տեղանունների մեկնաբանության ուղղությամբ: Ամեն անգամ հյուրերին Տաթև ուղեկցելիս ոգեւորված պատմում ենք հոգեւոր կենտրոնի, նրա համալսարանի մասին այնպես, կարծես խոսում ենք մի մեծ քաղաքի կամ բնակավայրի մասին: Մեզ ոչ մեկը չի հարցնում, թե այդ սահմանափակ տարածքում ինչպե՞ս է գոյություն ունեցել այդ ամենը: Եվ մենք մոռանում ենք ասել, կամ գուցե չգիտենք, որ Տաթևի վանական համալիրին ամեն ինչով ապահովել է Տանձատափը, որ այս ոչ մեծ գյուղը եղել է վանքի շտեմարանը, խոհանոցը, ալրաղացը, հացատունը, դարբնոցը, արհեստանոցը, բրուտամոցը: Այս ձորն է վանքին ապահովել մրգով, հատապտուղներով, դեղաբույսերով, տարբեր կանաչիներով, վառելավայրով, փայտածուխով: Արհեստավորների

գյուղ է եղել Տանձատափը: Բրուտագործությամբ, դարբնությամբ, կտավագործությամբ, ածխագործությամբ ելի ուրիշ արհեստներով հավանաբար հարյուրավոր տարիներ զբաղվել են առանձին գերդաստաններ, նրանց սերունդները: Այս ամենը Սուրեն Վարդանյանը ներկայացնում է ոգեւորված, համոզված, հյուսելով, կենդանի ու նաեւ տեղ է թողնում, որ շատ հարցերում ինքը խորհես, եզրակացություններ անես: Ծանոթանալով անդրախտոր ձորի ժայռափեշով անցնող կածանի ծայրին անհայտ ժամանակներում կառուցված ջրաղացին, հարց է ծագում. չէ՞ որ Տանձատափում ջուր կար, եւ կարելի էր ջրաղացը կառուցել ավելի մոտիկ եւ մատչելի տեղ: Սովորական հայկական պատկեր է: Գյուղը լավ տեղ էս ունեցել է ջրաղաց: Այս մեկը կառուցվել է դառն օրվա համար, թշնամու հարձակման դեպքում անմատչելի տեղանքում ալրաղաց ունենալու նպատակով: Իսկ որպեսզի ջրաղացը պահվի՝ այն պետք է աշխատի, ահա թե ինչու դարեր ի վեր բանուկ է մնացել «իծաշարուկ» կածանը: Ես այն կարծիքին եմ, որ աշխարհի բոլոր պատմությունները՝ քո երկրի, թե՛ այլ, հին աշխարհի, թե՛ նոր, սկսվում են սեփական բնակավայրի պատմության իմացությունից, նրա բնությունը ճանաչելուց: Այստեղից է սկսվում նաեւ հայրենիքն ու հայրենասիրությունը: Առիթ են ունեցել խնդրել, որ բարձր դասարանցիները շարադրություն գրեն իրենց նախնիների մասին, տխուր արդյունքներ են

եղել: Այսօր, երբ համակարգիչներն ու մյուս էլեկտրոնային սարքերը մատաղ սերոյին կտրում են իրականությունից, տանում են վիրտուալ՝ երեւակայական միջավայր, աստղային պատերազմների, հրեշներին ու մարդ-սարդերի աշխարհի, կարելի է ստեղծել զուգահեռը՝ նրանց իրականության մեջ պահելու ու ճիշտ կողմնորոշելու համար: Կարծում եմ՝ այդ գործին անփոխարինելի նպաստ կլինի դպրոցական ծրագրերում տեսնել հայրենի գյուղի, քաղաքի պատմության ուսուցումը:

Ս.Վարդանյանի գիրքն ինձ առիթ տվեց խորհելու մի հարցի մասին եւս: Կարելի է ասել, որ Տանձատափը աշխարհի այն երջանիկ բնակավայրերից մեկն է, որ տեղանքի կտրվածության պատճառով առավել քիչ է ենթարկվել ժամանակի ավերածություններին, մնացել հնարավորինս անաղարտ եւ կուսական: Համոզված եմ, որ եթե գյուղը գտնվեր վանքի հակառակ կողմին, միջնա Տաթև հասնող ճանապարհի վրա՝ նրանից բան մնացած չէր լինի: Թե Ռոտամի կիրճի արեւմտյան թեւից եւ, մասնավորապես, Տանձատափից ինչ կմնա վաղը, եթե սկսեն շահագործել Սեւարանցի հանքերը, հայտնի չէ: Մեծ է վտանգը, որ կարող են անհետանալ նաեւ այս անկրկնելի ու անգնահատելի արժեքները:

Այսօր, Տաթևի ճոպանուղու առկայության պայմաններում, Այունիքի եւ մասնավորապես Գորիսի տարածաշրջանի զարգացման հեռանկարային ուղղություններից մեկը տուրիզմն է: Կարծում եմ, որ Գորիսը զբոսաշրջության կենտրոն դարձնելու պետական ծրագրի սահմաններում պետք է առանձնացնել Տաթև-Տանձատափ-Բարձրավանն իբրև էքստրեմալ տուրիզմի զարգացման հատուկ տարածաշրջան, ստեղծել զարգացման ամենաթանկ ծրագիր: Արկածային տուրիզմի այս տեսակը գնալով մեծ թափ է ստանում աշխարհում: Այն ավելի ակտիվ հանգստի ձեւ է դարձել, շատերն են ձգտում մազլեյնգներ, իջնել անդրախտոր ձորերը, զբոսաշրջավի գնալ ձիերով՝ դժվարանց կածաններով ու խիտ անտառներով, կատարել լուսանկարչական որս՝ հազվագյուտ կենդանիների, թռչունների, բույսերի եւ այլն:

Ասում եմ, որ էքստրեմալ տուրիզմի համար լավ պայմաններ ունեցող երկրներից մեկը Հայաստանն է, իսկ մշված տարածաշրջանը՝ Տաթևի ձորը, կարծում եմ անփոխարինելի ու անգնահատելի է: Առավելություններից մեկն այն է, որ այդ գործում կարելի է ընդգրկել տեղի ընտանիքներին՝ բնակարանների առանձին սենյակներ վերածելով անհրաժեշտ պայմաններ ունեցող հյուրանոցային համարների, որոնց սպասարկումը կապահովել իրենք՝ տանտերերը: Հետաքրքիր երթուղիներ ստեղծելու, սպասարկման բարձր մակարդակ ապահովելու դեպքում, այս բիզնեսը կլինի բավական շահութաբեր եւ սոցիալական առումով՝ արդյունավետ: Աստիճանաբար կյանքի կկոչվեն նաեւ փռերը, ջրաղացը, դարբնոցը, կաշխատեն բրուտներն ու դարբինները, որ Ս. Վարդանյանի մեծ ցանկությունն է գրքի եզրափակիչ խոսքում:

Համոզված եմ, որ Սուրեն Վարդանյանի «Հինավուրց Տանձատափ» ժամանակի ընթացքում սեղանի գիրք է դառնալու ոչ միայն տանձատափցիների, այլև՝ զբոսաշրջությանը զբաղվող շատ ուղեկցողների, հայրենագետների, պատմաբանների ու նաեւ՝ շարքային ընթերցողների համար:

Այունիքի փրկարարների վարժանքը Կապանում

ՀՀ ԱԻ նախարարության եւ Շվեյցարիայի միջազգային զարգացման եւ համագործակցության գործակալության հետ իրականացվող «Տարածքային արագ արձագանքման քիմերի ստեղծում» ծրագրի շրջանակներում ստեղծված Այունիքի մարզի որոնողափրկարարական քիմի 47 անդամի մասնակցությամբ Կապանի օդանավակայանի տարածքում անցկացվեց Այունիքի որոնողափրկարարական քիմի IN-SARAG-ի չափանիշներին համապատասխան ներքին որակավորման ուսումնական վարժանք, որին հետևել է նաեւ Այունիքի մարզպետի տեղակալ Վաչե Գրիգորյանը: Վարժանքի ողջ ընթացքում, որը ղեկավարել է ՀՀ ԱԻՆ ՓԾ ԲՊԱՀՎԿ վարչության պետ, փ/ծ գնդապետ Հ.Եմիշյանը, թի մի փրկարարներն իրականացրել են ուսումնական որոնողափրկարարական աշխատանքներ՝ իրենց տրամադրված INSARAG-ի որակավորում ստանալու համար անհրաժեշտ գույքով, որոնց օգտագործման համար անցկացվել են համապատասխան դասընթացներ: Կապանում անցկացվող ուսումնավարժանքի համար Վ. Գրիգորյանն իր շնորհակալությունն է հայտնել կազմակերպիչներին՝ մարզի փրկարարական ծառայությունը հատկապես փրկարարական աշխատանքների համար նախատեսված ժամանակակից սարքավորումներով ապահովելու համար:

www.37-38.com
9 հուլիսի 2014թ.

«Orogen Gold» ընկերությունը Հայաստանի ոսկու հանքում ալմաստի հորատում է սկսում

«Orogen Gold» ընկերությունը Հայաստանի ոսկու հանքում ալմաստի հորատում է սկսում:

Բրիտանական «Orogen Gold» ընկերությունը հայտարարել է հորատման սարքավորումների մոբիլիզացման մասին՝ 2014 թվականին Հայաստանի Մուծքի ոսկու հանքում ալմաստի հորատման ծրագիրը վերագործարկելու համար: «Mining Global» ամսագիրը գրում է, որ ընկերության թիրախն են լինելու ավելի վաղ ընդլայնված ոսկու կազմավորումները եւ վերջերս բացահայտված մի քանի խոշոր երկրաֆիզիկական անոմալիաները. ծրագրվում է հորատել նվազագույնը 3.000 մետր: Այս կապակցությամբ «Orogen Gold»-ի գործադիր տնօրեն Էդ. Սլոուին մեկնաբանել է. «Ելնելով 2013 թվականին ալմաստի հորատման եւ երկրաֆիզիկական վերջին ծրագրի հուսադրող արդյունքներից, ինչի հետեւանցով մի քանի մոր նշանակալի թիրախ բացահայտվեց, մենք ուրախ ենք հայտարարել հորատման սարքավորումների մոբիլիզացման մասին՝ 2014 թվականին Մուծքում հորատման աշխատանքներ սկսելու նպատակով»: Մուծքի հանքավայրը տեղակայված է Հայաստանի հարավային հատվածում, ծովի մակարդակից շուրջ 2.000 մետր բարձրությամբ, մայրաքաղաք Երեւանից 3 ժամվա հեռավորությամբ: Փորձագետներն այս ծրագիրը ընտրել էին 2013 թվականի սկզբին, մշված ոսկու հանքավայրում փորձարարական հանքայնացման բացման մասին տեղեկություն ստանալուց հետո: news.am
10 հուլիսի 2014թ.

Մի անգամ Սիսիանում

Իրադատում



ՈՒՆԻԿ ԶԱՅՐԱՊԵՏՅԱՆ

ՍԿԻՉԲԸ ԵՋ 1

Հկա: Փոսեր են, մեկը մյուսին կպած փոսեր, այն-բան շատ, որ թվում է՝ գտնվում ենք անմարդաբնակ մի վայրում, որտեղ օրեր առաջ հեղեղ կամ տարերային աղետ է եղել: Շենքերի բակում, ծառերի տակ 3-7 տարեկան երեխաներ են խաղում, աստվածային գեղեցկության երեխաներ: Մեքենան կանգնեցնում ենք, իջնում: Մեզ սպասում են:

Սիսիանից վերադառնալուց անցել է մոտ մեկ ամիս: Բայց տեսածս ինձ հանգիստ չի տալիս: Ա՛յ մարդ, իսկապես զարմանալի ժողովուրդ ենք: Մեր պատմության մեջ ունեցել ենք 13 մայրաքաղաք: Դա քիչ է, ունենք նաեւ հայրաքաղաք, մշակութային մայրաքաղաք, մեր Արշակ արքան էլ ուզում էր հիմնել գեղեցիկ, էլիտար բնակիչներով մայրաքաղաք: Երեւան մայրաքաղաքի տասնյակ գրախանութներ վերացնում եւ դրանց տեղում հացատուն կամ դեղատուն ենք բացում, իսկ Երեւանը հայտարարում գրքի համաշխարհային մայրաքաղաք: Հիմա էլ Սիսիան ավանդապահ, երկրապահ սիրուն քաղաքի սիրուն երիտասարդությանը ցրել ենք աշխարհով մեկ, հետո էլ Սիսիանը հայտարարել երկրի երիտասարդական մայրաքաղաք: Ի՞նչ դիպուկ է ասել Դերեմիկ Դեմիրճյանը, թե՛ հայի չափը՝ անչափն է:

Մոտ քառասուն տարի առաջ դարձյալ Սիսիանում էի: Այդ օրերին Սիսիանը հանրապետական նշանակության քաղաքի կոչում էր ստացել: Տեղաբնակ բարեկամներիցս մեկն այդ առիթով ծնված անեկդոտ պատմեց. սիսիանցի տատիկը պատասխանում է թոռան նամակին ու նամակի վերջում ավելացնում՝ մենք լավ ենք, առողջ, համ էլ Սիսիանին քաղաքի կոչում են տվել, շոգից խեղդվում ենք:

Չգիտեմ երիտասարդական մայրաքաղաք ասելու տակ ով ինչ է հասկանում, բայց ես հասկանում եմ, որ այդպիսի կոչում շնորհողները նախեւառաջ պետք է մտածեին այս գողտրիկ քաղաքում երիտասարդության կյանքի, աշխատանքի, նորմալ գործունեության համար այնպիսի պայմաններ ստեղծել, որը քաղաքը շահեկանորեն առանձնանար հանրապետության իր նման այլ բնակավայրերից, ու դա պետք է նկատելի լիներ անգն աչքով:

Այցելեք Սիսիան, զինվեք լավագույն ցանկություններով ու մեկնումեկին փորձեք համոզել, որ այն ինչ-որ բանով տարբերվում է հանրապետության, մարզի մյուս, բոլորի կողմից մոռացված քաղաքներից: Իսկ եթե տարբերվում է, ապա միայն քարուքանդ, երեկոյան ժամը յոթից հետո ամայի փողոցներով եւ նրանով, որ մյուս քաղաքների նման երիտասարդական մայրաքաղաքն էլ արագորեն դատարկվում է երիտասարդներից:

Այստեղ էլ գեղեցիկ առանձնատներից շատերի դարպասների ճակատները «զարդարում» է «վաճառվում է» տիպաբանականությամբ բառը:



Այս ամենի մեջ թերեւս միակ ձեռքբերումն այն է, որ այդ առիթով հարգարժան մասնատու Ռոբերտ Ամիրխանյանի կողմից ստեղծվել է Սիսիանին ձոնված, քաղաքն իսկապես բնութագրող մի հրաշալի երգ:

Մի քանի խոսք էլ Ջորաջ քարերի հարեւանությանը տնկված անճոռնի քարերի մասին: Նման բան նախածեռնող-իրականացնողը պետք է որ շատ զորավոր անհատ լիներ, թե չէ ո՛վ թույլ կտար սովորական մահկանացուին նման ինքնագործունեությամբ զբաղվել: Իսկ գուցե ինքնագործունեություն չէ, այլ ամեն ինչ համաձայնեցված է «վերեւների» հետ: Գուցե: Կամ էլ հողը մարդու սեփականությունն է, դե նա էլ ծառ չի տնկել, քար է տնկել:

Լավ, մենք՝ հեջ: Ջորաջ քարերը՝ Քարահունջը տեսնելու համար ամեն տարի տարածք են այցելում հազարավոր արտասահմանցի գերսաշրջիկներ, տասնյակ գիտական արշավախմբեր: Տեսնես նրանք ի՞նչ գնահատական են տալիս տեսածին: Նրանց ուղեկցող էքսկուրսավարն ինչպե՞ս է բացատրում նոր քարերի ի հայտ գալը, ծնունդը: Նման բազմաթիվ հարցեր են ծագում, ծնվում, ու ոչ մեկին չեն կարող շատ թե քիչ խելքը գլխին պատասխան գտնել: Եվ չնայած դրան՝ նոր ենթադրություններ ու հարցեր են առաջ գալիս: Գուցե նոր քարերը «ստեղծվել են» ապագա պատմաբանների «թյուրիմացության մեջ» զգելու համար, թե ո՞րն է սրանցից «իսկականը»: Ի՞նչ իմանաս:

Կարծում եմ այս երեւոյթի վերաբերյալ իրենց անլուրջ վերաբերմունքը կվերանայեն մարզպետարանի եւ Սիսիանի քաղաքապետարանի համապատասխան ծառայությունները, մշակույթի նախարարությունը, պատմամշակութային հուշարձանների պահպանությունն իրականացնող պետական լիազոր մարմինը: Ու այդ

ամենը կարվի Սիսիանի աշխարհի մտավորականության հսկող հայացքի ներքո:

Հասկանալի է, ընթերցողն ասածներիս մեջ նաեւ հունոր է նկատում: Այժմ առանց հունորի: Նոր քարերի դրվածքի հեղինակը, անտարակույս, հայրենասեր մարդ է, շատ է սիրում Սիսիանի հողն ու ջուրը, պատմությունը, այդպես են կարծում: Ու այն, ինչ արել է, արել է սիրով, իր եզերքի նկատմամբ լրացուցիչ ուշադրություն գրավելու բարի նպատակով եւ այդ ամենի վրա ծախսել իսկապական միջոցներ: Պատկերացնո՞ւմ եք, թե մարդկային ինչ ջանք, աշխատանք է անհրաժեշտ մեկ քարաբեկորը հանքից հանելու, շատ թե քիչ մշակման ենթարկելու, տեղափոխելու ու տեղադրելու համար: Իսկ այդպիսի քարաբեկորներն այնտեղ քսանից ավելի են: Ակամայից մտածում եմ, իսկ եթե այդ միջոցները, ջանքերն ուղղվեին Սիսիան քաղաքի քարուքանդ փողոցներից, բակերից գոնե մեկ-երկուսը կարգի բերելո՞ւն:

Հա, մի հարց էլ է ինձ մտահոգում. երիտասարդության մայրաքաղաքի փողոցները պարբերաբար մաքրվո՞ւմ են, թե՛ ոչ: Պատկերացնո՞ւմ եք, թե որքան գեղեցիկ կլիներ Սիսիանը, եթե փողոցները, մայրերն ու բակերը կանոնավոր մաքրվեին, եթե հրաշալի եւ անզուգական ջրային հայելիները գարշահոտության հավերժական ակունք չլինեին եւ ծառայեին իրենց նպատակին:

Դույզն իսկ չեն կասկածում, որ այս տողերը կարդացողներից շատերը եւ հատկապես սիսիանցի իմ բարեկամները բարձրաձայն իրենց դժգոհությունն են արտահայտելու, նաեւ հայտնելու են ինձ, բայց հենց մենակ կամ երկու հոգով մնան գուցե եւ բարձրաձայն ասեն՝ բայց դե ճիշտ է ասում...

Ո՛վ է Ֆինանսավորում «Այունյաց երկրի» դեմ արշավանքը

Իրավական դաշտ

Վերջին մեկ ամսում «Այունյաց երկրի» դեմ հրապարակված նյութերը եւ դրանց շուրջ զարգացումները ցույց են տալիս, որ կոնկրետ ու գործնական քայլերով խոչընդոտներ են հարուցվում թերթին՝ մարզային կյանքի որոշ ոլորտների մասին հետազոտ հրապարակումները կասեցնելու նպատակով, ինչի համար թերթի խմբագրությունը դիմել է դատական ատյան եւ ՀՀ գլխավոր դատախազություն:

Ավելի կոնկրետ՝ «Այունյաց երկրի», թերթի խմբագրի ու նրա ընտանիքի անդամների դեմ մայրաքաղաքային երեք կայքում հրապարակվել են հաչոց-հողվածներ, որոնցից մեկն անստորագիր է, երկրորդը՝ կեղծ ստորագրությամբ, երրորդը՝ դեռեւս անհայտ մարդու ստորագրությամբ:

Այդ հոդվածներն իրենց մեջ ներառում են վիրավորանք ու զրպարտություն պարունակող արտահայտություններ, ինչի համար «Այունյաց երկիրը» հուլիսի 1-ին հայցադիմումներ է ներկայացրել Երեւան քաղաքի ընդհանուր իրավասության դատարաններ:

Մասնավորապես՝ Iratvutyun.am կայքի հիմնադիր «Արցախ-հայ մամուլի ակումբի» (Արման Սարգսյան) դեմ հայցն ուղարկվել է Երեւան քաղաքի Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան: Կայքը հունիսի 26-ին հրապարակել է մի զազրախոսություն՝ առանց ստորագրության:

Ընդդեմ hearan.am կայքի՝ հայցը նույնպես ուղարկվել է Երեւան քաղաքի Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան: Կայքը ս.թ. հունիսի 5-ին հրապարակել է մի հոդված, որի տակ դրված է Հայկ Միրզոյան՝ դեռեւս անհայտ մարդու ստորագրությունը: Ըստ այդ հայցի՝ հայցվորը պատասխանողներ է ճանաչել Սերիկե Գաբրիելյանին (կայքի խմբագիր) եւ Հայկ Միրզոյանին, որի ինքնությունը կփորձենք պարզել դատարանում:

Մեկ այլ հայցով էլ կքննարկվի ararum.am կայքում ս.թ. հունիսի 6-ին հրապարակված վարչապետությունը, որի տակ դրված է Վիգեն Վանյանի ստորագրությունը: Այդ հայցն ուղարկվել է Երեւան քաղաքի Արաբկիր եւ Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան: Պատասխանողներ են ճանաչվել ararum.am կայքի սեփականատեր Հովհաննես Եսայանը եւ դեռեւս անհայտ Վիգեն Վանյանը, ում ինքնությունը եւս կփորձենք պարզել:

Մենք արդեն կարծիք ենք հայտնել առ այն, որ այդ հաչոցները հրապարակվել են Սյունիքից հատկացվող ֆինանսական միջոցների հաշվին: Դա ակնհայտ է դարձել Iratvutyun.am կայքում ս.թ. հունիսի 26-ին հրապարակված նյութի շուրջ տեղի ունեցած անցուդարձից: Ս.թ. հուլիսի 1-ին այդ մասին տեղյակ ենք պահել ՀՀ գլխավոր դատախազ Գ.Կոստանյանին՝ մասնավորապես նշելով, որ hearan.am կայքի աշխատակից Արմենակ Դավթյանը Սամվել Ալեքսանյանի դեմ ինչ-որ տեղից ստացված անամուկ հոդված հրապարակելու համար norus.am կայքին առաջարկել է 600 հազար դրամ:

«Այունյաց երկիրն» այդ ամենը համարում է կոնկրետ մարդկանց կողմից լրագրողի օրինական մասնագիտական պարտականությունների կատարման խոչընդոտում՝ մարզային կյանքի որոշ ոլորտների մասին հրապարակումներ թույլ չտալու նպատակով, ինչը քրեորեն պատժելի արարք է ՀՀ քրեական օրենսգրքի 164 հոդվածի համաձայն:

Նշված հայցադիմումների եւ դիմումի շուրջ զարգացումների մասին տեղյակ կպահենք ընթերցողին:

Սեփ.լրատվություն

<h2>Այունյաց երկիր</h2> <p>Գլխավոր խմբագիր ՍՍՍՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ</p> <p>ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀԳՏԱՐԱԿԻՉ «ՍՅՈՒՆՅԱՆ ԱՇԽԱՏՈՒՄ» ՍԱՆՄԱՆԱԾՓՈՒ ՊՏԱՍՍԻՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ</p>	<p>Հասցե՝ Գեոպոլիս</p> <p>Էլ. փոստ՝ h@unicyer.kir</p>	<p>Կապան, Շահումյան 20/32: (0285) 5 25 63, (091) 45 90 47, (077) 06 28 02: syuniacyer.kir@mail.ru www.syuniacyer.kir.am</p>	<p>Խմբագրության եւ հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել:</p> <p>Նյութերը ներկայացնել մեքենագիր վիճակում (3 մեքենագիր էջից ոչ ավելի):</p> <p>«ԳՈՎԱԶԳ - ԾԱՆՈՒՑՈՒՄ» բաժնուն տպագրվող նյութերի համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում: Հղումը «Այունյաց երկրին» պարտադիր է:</p>	<p>© Ճանաչելու տակ տպագրվում են գովազդային նյութեր: Գրանցման վկայականը՝ 01U 000231: Թերթը տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում: Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2:</p> <p>Ծավալը՝ 2 տպագրական մամուլ: Տպարանակը՝ 2000, գինը՝ 100 դրամ: Ստորագրված է տպագրության 11.07.2014թ.:</p>
	<p>Թղթակցությունները չեն գրախոսվում եւ հեղինակներին չեն վերադարձվում:</p>			